



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 11 » ապրիլի

2019 թվականի N 8/1

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱԶԿԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՈՒՂՂԱԾՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԶՐԱՐՔԻԱՑՄԱՆ, ՑԱՆՅԵՐԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՇՏԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՆՑԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՅԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի
9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել Համաշխարհային բանկի աջակցությամբ ՀՀ գյուղատնտեսության
զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող համայնքների գյուղատնտեսական
ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրով անասնապահական
ուղղվածություն ունեցող համայնքների արոտավայրերի ջրարբիացման, ցանցերի
կառուցման և դաշտային ճանապարհների անցանելիության ապահովման վերաբերյալ
ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Լ. ՅՈԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ, ՀՀ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ
ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ
ՋՐԱՐԲԻԱՑՄԱՆ, ՑԱՆՑԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՇՏԱՅԻՆ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՆՑԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/8, հոկտեմբերի 30-ի թիվ 14/3, դեկտեմբերի 5-ի թիվ 18/6 և դեկտեմբերի 12-ի թիվ 19/17 որոշումներ:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

Հաշվեքննության առարկան

Համաշխարհային բանկի աջակցությամբ, ՀՀ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրով անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքների արոտավայրերի ջրարբիացում, ցանցերի կառուցում և դաշտային ճանապարհների անցանելիության ապահովում:

Հաշվեքննության ընթացակարգը

Հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2018 թվականի հուլիսի 6-ից մինչև 2019 թվականի ապրիլի 15-ը ներառյալ:

Հաշվեքննության տեսակ

Իրականացվել է համապատասխանության հաշվեքննություն:

Հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը

ՀՀ հաշվեքննիչ պալատի հինգերորդ վարչություն:

Ստուգման օբյեկտը	Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ:
Ստուգման առարկան	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրով անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքների արոտավայրերի ջրարբիացում, ցանցերի կառուցում և դաշտային ճանապարհների անցանելիության ապահովում:
Ստուգման ընթացակարգը	Զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերահաշվարկ և վերակատարում:
Ստուգումն ընդգրկող ժամանակաշրջանը	2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Ստուգման կատարման ժամկետը	2018 թվականի նոյեմբերի 3-ից մինչև 2019 թվականի ապրիլի 15-ը ներառյալ:
Զննման և դիտարկման ընացակարգերի իրականացման ժամկետը	2018 թվականի նոյեմբերի 3-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 21-ը ներառյալ:

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ներառող ժամանակաշրջանում ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի» (այսուհետ՝ Հիմնադրամի) կողմից, համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրով անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքների արոտավայրերի ջրարբիացման, ցանցերի կառուցման և դաշտային ճանապարհների անցանելիության ապահովման ծրագրի (այսուհետ՝ Ծրագրի) շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների համապատասխանությունը դրանց իրականացման նպատակով կնքված պայմանագրերին և կազմված նախագծերին, ինչպես նաև այդ աշխատանքների նախահաշիվների համապատասխանությունը նախագծերին, ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշմանը և ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին (ՇՆևԿ):

Ղեկավարության պատասխանավորությունը

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում՝ ծրագրի շրջանակում տրամադրված միջոցները, կնքված պայմանագրերին, ՀՀ-ում գործող օրենսդրությանը, շինարարական նորմերին, կանոններին և ստանդարտներին համապատասխան օգտագործման համար:

Հաշվեքննողի պատասխանավորությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների վերաբերյալ: Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Մենք հետևեցինք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորեցինք և իրականացրեցինք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքները գերծ են էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական

աշխատանքների էական անհամապատասխանությունների դիսկերի գնահատումը: Ռիսկերի նման գնահատում իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ կապված Ծրագրի շրջանակում իրականացված շինարարակա աշխատանքներ հետ՝ կազմելու տվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր, սակայն ոչ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

Մենք գտնում ենք, որ ձեռք են բերվել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ոչ լիարժեք եզրահանգման հիմքեր

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 1-ին կետում, հաշվեքննության ժամանակաշրջանում Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների նախահաշիվներում աշխատանքների ծավալները չեն համապատասխանում նախագծային չափերով հաշվարկի դեպքում ստացվող ծավալներին, նախահաշվային արժեքների հաշվարկները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2011թ հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի և գործող Շինարարական Նորմերի ու Կանոնների (ՇՆևԿ) պահանջներին: Նշված անհամապատասխանությունների արդյունքում թվով 54 օբյեկտների նախահաշիվներն ավելի են հաշվարկվել 286,077 հազար դրամով:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 1-ին կետում, հաշվեքննության ժամանակաշրջանում Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների ճշտված նախահաշվային արժեքների և պայմանագրային գների համադրումից պարզվել է, որ 1,957,960 հազար դրամ ընդհանուր պայմանագրային գնով թվով 33 օբյեկտների պայմանագրային գները գերազանցում են մեր կողմից ճշտված նախահաշվային արժեքները 196,053 հազար դրամով: Առանձին դեպքով պայմանագրային գինը գերազանցում է ճշտված նախահաշվային արժեքը 52 %-ով:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 1-ին կետում, հաշվեքննության ժամանակաշրջանում Ծրագրի շրջանակում իրականացված որոշ շինարարական աշխատանքների նախագծերի ամփոփագրերում, պայմանագրերում և կատարողականներում նշված ծավալները չեն համապատասխանում սահմանված կարգով և նախագծային նիշերով չափերով և բնահողերի շերտերի հզորություններով հաշվարկված ծավալներին: Նշված անհամապատասխանությունների արդյունքում կատարողական ակտերով ավելի են հաշվարկվել 27,456 հազար դրամ, իսկ պայմանագրով 8,918 հազար դրամ:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 2-րդ կետում, հաշվեքննության ժամանակաշրջանում Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների պայմանագրով պատվիրված աշխատանքների տեսակների և ծավալների փոփոխություններ արդյունքում տեղի է ունեցել աշխատանքների թանկացում 25,550 հազար դրամի չափով:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 2-րդ կետում, հաշվեքննության ժամանակաշրջանում Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների պայմանագրային փոփոխությունների ժամանակ փոփոխվող աշխատանքների ծավալների, լրացուցիչ աշխատանքների տեսակների սխալ հաշվարկման և փոխհատուցման չենթակա լրացուցիչ աշխատանքների փոխհատուցելու արդյունքում ավելի է հաշվարկվել և 13,336 հազար դրամ:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 2-րդ կետում, հաշվեքննության ժամանակաշրջանում Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների փոփոխության ընթացքում սխալ հիմնավորմամբ, առանց անհրաժեշտության, լրացուցիչ աշխատանքներ ավելացնելու հետևանքով հաշվարկվել է 3,468 հազար դրամի կատարողական:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 2-րդ կետում, հաշվեքննության ժամանակաշրջանում Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների փոփոխության ընթացքում ծրագրի շրջանակներից դուրս կատարված լրացուցիչ աշխատանքների համար հաշվարկվել է 6,083 հազար դրամի կատարողական:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 2-րդ կետում, հաշվեքննության ժամանակաշրջանում Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների ընթացքում չհիմնավորված առաջարկությունների հիման վրա փորձաքննությամբ երաշխավորված նախագծերում փոփոխություններ կատարելու արդյունքում կատարողական ակտերով հաշվարկվել և 15,027 հազար դրամ:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 2-րդ կետում, հաշվեքննության ժամանակաշրջանում Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների ընթացքում առանց որևէ առաջարկի, հիմնավորմամբ և անհրաժեշտության կատարված փոփոխության արդյունքում հաշվարկվել է 3,557 հազար դրամի կատարողական:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 3-րդ կետում, հաշվեքննության ժամանակաշրջանում Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների կատարողական ակտերով հաշվարկել են փաստացի կատարվածից ավելի ծավալներ և այլ աշխատանքներ: Նշված անհամապատասխանությունների արդյունքում ավելի է հաշվարկել 13,410 հազար դրամի կատարողական: Բացի այդ, թվով երկու օբյեկտում արձանագրվել է 936 հազար դրամի կրկնակի կատարման ենթակա աշխատանք:

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II. բաժնի 4-րդ կետում, հաշվեքննության ժամանակաշրջանում Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքների կատարման և որակի հաստատման և վերահսկողական գործառույթները չեն իրականացվել ամբողջ ծավալով: Ծածկված աշխատանքների ընդունման ակտերի կազմումը կրել է ձևական բնույթ:

Ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով, բացառությամբ «Ոչ լիարժեք եզրահանգման հիմքեր» բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը ներառող ժամանակաշրջանում Ծրագրի շրջանակում իրականացված շինարարական աշխատանքները բոլոր էական առումներով համապատասխանում են դրանց իրականացման նպատակով կնքված պայմանագրերին և կազմված նախագծերին, իսկ նախահաշիվները՝ նախագծերին, ՀՀ կառավարության 2011թ հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշման պահանջներին, ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին:

Արմեն Գևորգյան՝

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

09 ապրիլ 2019 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստան

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անհամապատասխանություն

Նախագծում, պայմանագրում և կատարողական ակտերում բնահողի մշակման ծավալները չեն համապատասխանում նախագծային չափերով հաշվարկի դեպքում ստացվող ծավալներին:

Հաշվեքննությանը չներկայացվեցին տեխնիկական մասնագրերում (բացի ՀԳՇՆ ՍՊԸ-ի կողմից կազմված նախագծերում) նշված ինժեներա-երկրաբանական տվյալների համար հիմք հանդիսացած պահուստային նյութերը և հետախուզական աշխատանքների՝ լեռնային փորվածքների և դաշտային հետազոտությունների սկզբնական արդյունքները՝ ըստ փորվածքների, տեղամասերի, ուղեգծերի և կոորդինատների:

Չներկայացվեցին նաև ինժեների ղեկավարությամբ իրավասու անձնակազմի կողմից իրականացված ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները:

- Մեր կողմից ընտրանքային կարգով ուսումնասիրվել են նախագծերում նշված ինժեներա-երկրաբանական տվյալները և ջրագծերի հողային աշխատանքների ծավալները, ինչից պարզվել է, որ

- ✓ «Անուշիկ Զրեր» ՍՊԸ-ի կազմած նախագծերում տարբերություններ են առաջացել նախագծային նիշերով և չափերով հաշվարկի դեպքում ստացվող հողային աշխատանքների ծավալների և նախագծի ամփոփագրում, նախահաշվում, պայմանագրում և կատարողական ակտերում հաշվարկված ծավալների միջև: Մասնավորապես.

- Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի ջրատարի բնահողի մշակման ծավալը նախագծում, նախահաշվում, պայմանագրում և կատարողական ակտերում ավելի է հաշվարկվել նախագծային նիշերով և չափերով հաշվարկի դեպքում ստացվող ծավալից 485 խմ-ով, որի դիմաց հաշվարկվել է 1,591 հազար դրամի կատարողական, իսկ նախահաշվային արժեքը ավելի է հաշվարկվել 1,635 հազար դրամով:

- Արագածոտնի մարզի Ապարան-2 համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգում բնահողի մշակման ծավալները պայմանագրում ավել են ցույց տրվել նախագծային չափերով հաշվարկի դեպքում ստացվող ծավալներից խրամուղու փորման

աշխատանքներում 452 խմ-ով, իսկ հարթակի կտրման աշխատանքներում 248 խմ-ով: Այս աշխատանքների համար դեռևս կատարողական ակտեր չէին կազմվել:

➤ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգում ջրագծերի բնահողի մշակման ծավալները նախագծում, նախահաշվում, պայմանագրում և կատարողական ակտերում պակաս են հաշվարկվել նախագծային նիշերով և չափերով հաշվարկի դեպքում ստացվող ծավալներից 434 խմ-ով:

➤ Արագածոտնի մարզի Ապարան-1 համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգում ջրագծերի բնահողի մշակման ծավալները պայմանագրում և կատարողական ակտերում պակաս են հաշվարկվել նախագծային նիշերով և չափերով հաշվարկի դեպքում ստացվող ծավալներից 423 խմ-ով:

✓ «Անուշիկ Զրեր» ՍՊԸ-ի կազմած նախագծերի մասնագրերում դաշտային ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտությունների, այդ շրջանին առնչվող արխիվային հաշվետվությունների ուսումնասիրության և կամերալ աշխատանքների ամփոփման արդյուքում ըստ ֆիզիկա-մեխանիկական ցուցանիշների և հասակային հերթականության առանձնացված բնահողերի հիմնական տեսակների շերտերի հզորությունները չեն համապատասխանում նախագծի երկայնական պրոֆիլում և մասնագրի ըստ պիկետների նկարագրությունում արձանագրված հզորություններին: Արդյունքում տարբերություններ են առաջանում ըստ մշակման բարդության կարգի բնահողերի ծավալների մեջ: Մասնավորապես.

Նախագծի երկայնական պրոֆիլում և ըստ պիկետների նկարագրությունում բնահողերի շերտերի հաստությունները չեն համապատասխանում դրանց համար հիմք հանդիսացած դաշտային ինժեներա-երկրաբանական հետազոտությունների, արխիվային հաշվետվությունների ուսումնասիրության և կամերալ աշխատանքների ամփոփման արդյուքում սահմանված հաստություններին

➤ Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգում 4-րդ և 7-րդ կարգի բնահողերի մշակման ծավալները ավել են հաշվարկվել համապատասխանաբար 78խմ-ով և 2844խմ-ով, իսկ 5-րդ կարգի բնահողի ծավալը պակաս է հաշվարկվել 2437խմ-ով:

➤ Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգում 4-րդ կարգի բնահողի մշակման ծավալը պակաս է հաշվարկվել 1655 խմ-ով, իսկ 5-րդ և 6-րդ կարգի բնահողերի ծավալները

ավել են հաշվարկվել համապատասխանաբար 1135 խմ-ով և 631 խմ-ով:

➤ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի արոտավայրերի ջրարբիացման ցանցում 3-րդ և 4-րդ կարգի բնահողի մշակման ծավալները պակաս են հաշվարկվել

1859խմ-ով, 5-րդ կարգինը ավել է հաշվարկվել 1105խմ-ով, իսկ 6-րդ և 7-րդ կարգինը ավել է հաշվարկվել 319խմ-ով:

➤ Արագածոտնի մարզի Ապարան-1 համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգում հարթակի բնահողի կտրման աշխատանքներում 4-րդ կարգի բնահողի ծավալը պակաս է հաշվարկվել 452 խմ-ով իսկ 5-րդ և 6-րդ կարգի բնահողի ծավալները ավել են հաշվարկվել համապատասխանաբար 69խմ-ով և 387խմ-ով: Խրամուղում բնահողի մշակման աշխատանքներում 4-րդ և 5-րդ կարգի կարգի բնահողի ծավալները պակաս են հաշվարկվել համապատասխանաբար 1098խմ-ով և 1172խմ-ով իսկ 6-րդ և 7-րդ կարգի բնահողի ծավալները ավել են հաշվարկվել համապատասխանաբար 1774խմ-ով և 75խմ-ով:

Որպես կանոն ավել են հաշվարկվել ավելի բարձր մշակման բարդության կարգ ունեցող բնահողերի ծավալները՝ արդյունքում նախահաշվային արժեքները ավել են հաշվարկվել 74,523 հազար դրամով, կատարողականները 24,409 հազար դրամով և մեկ օբյեկտում, որտեղ դեռևս կատարողականներ չեն կազմվել, պայմանագրային գինը 8,918 հազար դրամով:

➤ Նույն անհամապատասխանության արդյունքում Արագածոտնի մարզի Ապարան-2 համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգում, որի համար դեռևս կատարողական ակտեր չէին կազմվել, ըստ բնահողի մշակման բարդության նախագծային և պայմանագրային ծավալները կտրման աշխատանքներում 4-րդ և 5-րդ կարգի բնահողերի համար պակաս են հաշվարկվել համապատասխանաբար 528 խմ-ով և 196 խմ-ով, իսկ 6-րդ և 7-րդ կարգի բնահողերինը ավել են հաշվարկվել համապատասխանաբար 946 խմ-ով և 26 խմ-ով: Խրամուղու մշակման ծավալը պակաս է հաշվարկվել 916 խմ-ով, իսկ 5-րդ, 6-րդ և 7-րդ կարգի բնահողերի ծավալները ավել են հաշվարկվել 610 խմ-ով 726 խմ-ով և 32 խմ-ով:

Նախագծային ընկերությունների կողմից հիդրոմուրճով փխրեցման աշխատանքների միմյանցից էականորեն տարբեր նախահաշվային արժեքներ ընդունելու արդյունքում ամենացածր նախահաշվային միավոր արժեքի համեմատ ավել են հաշվարկվել 88,223 հազար դրամով:

• Բոլոր նախագծողների կողմից նախահաշիվներում ժայռային ապարների փխրեցման աշխատանքները հաշվարկվել են որպես հիդրոմուրճով փխրեցման աշխատանքներ, որոնց համար ՀՀ-ում գործող նորմատիվային գնացուցակներ (միավոր նորմատիվային նախահաշվային արժեքներ)

չկան: Տարբեր նախագծային կազմակերպությունների կողմից, նախահաշիվների ուղղակի ծախսերում, կիրառվել են միմյանցից էականորեն՝ մինչև 2,9 անգամ տարբերվող նախահաշվային արժեքներ: Ընդ որում, <<Անուշիկ ջրեր>> ՍՊԸ-ի կողմից կազմված

տարբեր օբյեկտների նախահաշիվներում կիրառել են միմյանցից մինչև 2,5 անգամ տարբերվող նախահաշվային միավոր արժեքներ: Որպես այս աշխատանքների նախահաշվային արժեքների կիրառման նորմատիվային հիմքեր նախահաշիվներում նշել են <<շուկա>>, <<ինֆորմ>>, <<գնահաշվարկ>>, <<ՎՀ-144, 01.07.2015թ>> կամ <<1-993 մեք, 1-1553 աշխ>>:

Նախահաշիվներում բնահողի փխրեցման աշխատանքները հիդրոմուրճով հաշվարկելու հիմնավորումները և այդ աշխատանքների համար կիրառված նախահաշվային հիմքերը տրամադրելու մեր հարցմանը ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պատասխանել է, որ դրանք իրենց և հիմնադրամի կողմից ենթակա չեն տնօրինման, առկա չեն և այդ հարցմանը առնչվող որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

• Պոլիէթիլենային խողովակների մոնտաժման աշխատանքների նախահաշվային միավոր արժեքներում, համաձայն ՇՆուԿ IV-2-82 հավաքածու 22-ի, ներառված են նաև խողովակաշարը մինչև 10 սմ հաստությամբ բնահողով լիցքի աշխատանքների արժեքները, հետևաբար որպես առանձին աշխատանք հաշվարկված բնահողի հետլիցքի աշխատանքների ծավալներից պետք է նվազեցվեն խողովակաշարերի տեղադրման աշխատանքների նախահաշվային արժեքներում ներառված հետլիցքի վերը նշված շերտի ծավալները, ինչը ոչ մի նախագծային կազմակերպության կողմից չի իրականացվել:

• Բնահողի բեռնետերով տեղափոխման աշխատանքների արժեքները հաշվարկելիս, բոլոր նախագծողների կողմից, կիրառել են ՀՀ-ում չգործող գնացուցակներ, այնինչ, համաձայն ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված <<Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ>>-ի՝ հավելված 8-ի, 20-րդ կետի, այն պետք է ընդունվեր շահագործող կամ շինարարական կազմակերպությունների գներով, ինչը ՀՀ-ում, որպես կանոն, <<հանքում>> աշխատելու դեպքում փոքր հեռավորությունների համար կազմում է մեկ տ-ն մեկ կմ փոխադրելու համար առավելագույնը 250 դրամ, ներառյալ բոլոր ծախսերն ու հարկերը այնինչ նախագծողների հաշվարկների ուղղակի ծախսերում այն կազմել է շուրջ 1100 դրամ:

ՀՀ-ում չգործող նորմ կիրառելու արդյունքում բնահողի 10 տոննան 1կմ տեղափոխման աշխատանքների արժեքը շուկայում առկա առավելագույն 2500 դրամի փոխարեն հաշվարկվել է 11000 դրամ: Համեմատության համար նշենք, որ ԼՂՀ կառավարության կողմից այն սահմանված է 816 դրամ՝ հաշվարկվածից 13 անգամ էժան:

Նախահաշիվներում նախագծով չնախատեսված բնահողի ձեռքով լրամշակման աշխատանքներ հաշվարկելու արդյունքում ավել է հաշվարկվել 17,148 հազար դրամ:

• Համաձայն ՇՆուԿ IV.2.82-ի, ՇՆուԿ III-8-76-ի և ՇՆուԿ 3.02.01-87-ի պահանջների բնահողի մշակման

աշխատանքներում լրամշակման աշխատանքների մեթոդը և ծավալը պետք է ընդունվի աշխատանքային նախագծում և աշխատանքների կազմակերպման նախագծում նշված ծավալին և մեթոդին համապատասխան և որպես կանոն, այն պետք է կատարվի մեխանիզացված մեթոդով: Աշխատանքների կազմակերպման նախագիծ ոչ մի օբյեկտի համար չի կազմվել: Թվով 11 օբյեկտների աշխատանքային նախագծերում և տեխնիկական մասնագրերում չեն նախատեսվել բնահողի ձեռքով լրամշակման աշխատանքներ, սակայն նախահաշիվներում, առանց որևէ հիմնավորման, հաշվարկվել են բնահողերի ձեռքով լրամշակման աշխատանքներ:

- Որոշ դեպքերում սխալ են ընդունվել Փ630մմ տրամագծով մետաղական կիսախողովակների մոնտաժման աշխատանքների նորմատիվային ծախսերը՝ Ե22-72 հիմնավորմամբ ծախսերի փոխարեն ընդունվել են Ե 22-75 հիմնավորմամբ նորմատիվային ծախսերը: Սխալ են հաշվարկվել կիսախողովակի ներկման աշխատանքների ծավալները: Միաձույլ բետոնե եզրաշերտի կառուցման Ե6-90 հիմքով նախատեսված նորմատիվային ծախսերի փոխարեն ընդունվել են Ե6-13 հիմքով սահմանված (բետոնե հիմք-հենարաններ) նորմատիվային ծախսերը: Խմոցների միաձույլ բետոնե հենարանների նյութերի գների հաշվարկներում բետոնի փոխարեն ընդունվել են հիդրոբետոնի գները: Փխրուն բնահողի ձեռքով մշակման աշխատանքը հաշվարկվել է որպես ժայռային գրունտ: Մետաղական ցանկապատի ներկման աշխատանքների մակերեսների հաշվարկում չեն կիրառվել ցանկապատի տեսակից կախված նորմերով նախատեսված գործակիցները: Քարի չոր սալարկման աշխատանքների նախահաշվային արժեքներում կիրառվել են նախագծով նշված հաստությունից մեծ հաստությունով սալարկման աշխատանքների նորմեր:

- Լոռու մարզի Զրաշեն համայնքի արոտավայրերում ջրարբիացման համակարգի փարախի կառուցման աշխատանքներում բնահողի տեղափոխման հեռավորությունը համաձայն նախագծային հորիզոնականների չափերի և ՇՆուԿ IV.2.82 Մաս IV Գլուխ 2 Հատոր 1-ի պահանջների կազմում է 10մ այնինչ պայմանագրում և կատարողականներում ընդունվել է 50մ արդյունքում ավել է հաշվարկվել 1,456 հազար դրամի կատարողական

Նախահաշվային արժեքների և ծավալների սխալ հաշվարկման, տնտեսապես ամենաշահավետ գները չկիրառելու արդյունքում 54 օբյեկտների նախահաշվային արժեքները ավել են հաշվարկվել 286,077 հազ դրամով որոնցից 33 դեպքով պայմանագրային գները գերազանցել են ճշտված նախահաշվային արժեքները 196,053 հազար դրամով:

Հեղևանք

- Նախագծային ծավալների սխալ հաշվարկման և դաշտային ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտությունների, արխիվային

հաշվետվությունների ուսումնասիրության և կամերալ աշխատանքների ամփոփման արդյունքում սահմանված հաստություններից երկայնական պրոֆիլում և պիկետային նկարագրությունում, ըստ մշակման բարդության կարգի, բնահողի շերտի այլ հաստություն ընդունելու արդյունքում, հաշվի առած կատարողականներով թե ավել հաշվարկված և թե պակաս հաշվարկված ծավալները, կատարողական ակտերով ավել են հաշվարկվել 27,456 հազար դրամ և Ապարան-2-ի պայմանագրով 8,918 հազար դրամ: Մանրամասը տես ստորև՝ աղյուսակ 1-ը:

- Նախագծային և նախահաշվային ծավալների, նախահաշվային արժեքների սխալ հաշվարկման (հաշվի առած թե ավել և թե պակաս հաշվարկված ծավալները), տնտեսապես ամնաշահավետ գները չկիրառելու և դաշտային ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտությունների, արխիվային հաշվետվությունների ուսումնասիրության և կամերալ աշխատանքների ամփոփման արդյունքում սահմանված հաստություններից երկայնական պրոֆիլում և պիկետային նկարագրությունում, ըստ մշակման բարդության կարգի, բնահողի շերտի այլ հաստություն ընդունելու արդյունքում 3,333,801 հազար դրամ ընդհանուր նախահաշվային արժեքով թվով 54 նախահաշիվներում ավել է հաշվարկվել 286,077 հազար դրամ: Առանձին դեպքերում ավել հաշվարկված նախահաշվային արժեքը կազմում է օբյեկտի նախահաշվային արժեքի 52%-ը (մանրամասը տես հավելված 1):

Ճշտված նախահաշվային արժեքների և շինարարական աշխատանքների պայմանագրային գների համադրումից պարզվել է, որ 1,931,498 հազար դրամ ընդհանուր պայմանագրային գնով թվով 33 օբյեկտների պայմանագրային գները գերազանցում են ճշտված նախահաշվային արժեքները 196,053 հազար դրամով: Առանձին դեպքով պայմանագրային գինը գերազանցում է ճշտված նախահաշվային արժեքը 51 %-ով (մանրամասը տես հավելված 2):

Աղյուսակ 1

Նախագծային ծավալների սխալ հաշվարկի արդյունքում ավել հաշվարկված կատարողական			
Օբյեկտի անվանումը	հազար դրամ		
	Անհամապատասխանության տեսակը		Ընդամենը
	ըստ մշակման բարդության	բնահողի	

	կարգի բնահողի շերտի երկու իրարամերժ հաստություններից ավելի մեծ կարգի ծավալը ավելացնող հաստությունը ընդունելու արդյունքում	ծավալի ավել հաշվարկից	տեղափոխման հեռավորության սխալ հաշվարկից	
NCB-CARMAC2-CP-16-A-1/02 (Artashavan CW) ՀՀ Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցում	7 535	1 591		9 126
CARMAC2-CP-15-G-6/02 (Artsvanist CW) ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի արոտավայրերում ջրարբիացման ցանցի կառուցում	1 533			1 533
CARMAC2-CP-16-A-6/02 (Aparan CW) ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցում	12 699			12 699
NCB-CARMAC2-CP-16-G-13/02 (Sarukhan CW) ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքի արոտավայրերում ջրարբիացման համակարգի կառուցում	2 642			2 642
CARMAC 2-CP-18-L-7/02 (Jrashen CW) ՀՀ Լոռու մարզի Զրաշեն համայնքի արոտավայրերում ջրարբիացման համակարգի կառուցում			1 456	1 456
Ընդամենը	24 409	1 591	1 456	27 456

2. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՊԱՏՎԻՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքների իրականացման ընթացքում կապալառուների և համայնքի ղեկավարների առաջարկությունների հիման վրա թվով 31 պայմանագրերի շրջանակներում կատարվել են աշխատանքների տեսակների և ծավալների փոփոխություններ: Ընդհանուր առմամբ, պայմանագրային գները ավելացվել են 212,983 հազար դրամով և նվազեցվել են 123,569 հազար դրամով: Առանձին դեպքերով կատարվել է մինչև 27%-ի չափով պայմանագրային գնի փոփոխություն, իսկ նախահաշվային արժեքով հաշվարկի դեպքում՝ մինչև 36%-ի չափով: Մասնավորապես, CARMAC2-CW-16-4/02 (GGH CW) ՀՀ ԳՆ Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի (7-14 առանցքների) վերանորոգման աշխատանքների պայմանագրում պայմանագրային միավոր գներով ավելացվել են 25,575 հազար դրամի աշխատանքներ և նվազեցվել են 11,163 հազար դրամի աշխատանքներ:

2.1 Անհամապատասխանություն

Փոփոխությունների համարժեքության ուսումնասիրությամբ պարզվել է, որ նվազեցվող աշխատանքների պայմանագրային միավոր գները նախահաշվային արժեքներից ցածր գնահատելու, իսկ ավելացվող աշխատանքների միավորի գները նախահաշվային արժեքներից բարձր գնահատելու արդյունքում թվով 16 պայմանագրերի շրջանակներում տեղի է ունեցել աշխատանքների թանկացում 25,550 հազար դրամի չափով՝

Ոչ համարժեք աշխատանքները միմյանցով փոխարինելու արդյունքում աշխատանքները թանկացել են 25,550 հազար դրամով:

ավելացված աշխատանքները գնահատվել են 94,972 հազար դրամ, իսկ նվազեցված աշխատանքները՝ 52,350 հազար դրամ, այնինչ ավելացված աշխատանքների նախահաշվային արժեքը կազմել է 88,684 հազար դրամ, իսկ նվազեցվածներինը՝ 71,612 հազար դրամ:

Հետևանք

Նվազեցվող աշխատանքների պայմանագրային միավոր գները նախահաշվային արժեքներից ցածր գնահատելու, իսկ ավելացվող աշխատանքների միավորի գները նախահաշվային արժեքներից բարձր գնահատելու արդյունքում փոփոխությունների ժամանակ, տեղի է ունեցել աշխատանքների թանկացում 25,550 հազար դրամի չափով:

2.2 Անհամապատասխանություն

Չնայած նրան, որ <<Էմ Զի դիզայն>> ՍՊԸ-ի կողմից 18.04.2016թ.-ին տրված թիվ 03-փ քործաքննության եզրակացությամբ երաշխավորվել է, որ Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքի արոտավայրերում ջրարբիացման համակարգի նախագծային փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ-ում գործող օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական

Նախագծերում, որոնց համապատասխանությունը գործող նորմերին և ստանդարտներին երաշխավորվել են փորձագիտական եզրակացությամբ, կատարվել են 15,027 հազար դրամի այնպիսի փոփոխություններ որոնք կհամարվեն հիմնավոր միայն նախագծերը նորմերին և ստանդարտներին չհամապատասխանելու դեպքում:

փաստաթղթերի պարտադիր պահանջներին, գյուղապետի և կապալառուի առաջարկությունների հիման վրա <<ջրատարի մեջ երաշխավորված ջրի մաքրություն>> ստանալու համար լրացուցիչ նախատեսել են աղբյուրների վրա աղբյուրակապերի կառուցում և աղբյուրներից մինչև ջրընդունիչ ձգվող 400 գծմ երկարությամբ բաց առվակի փոխարեն ջրագծի կառուցում և այդ աշխատանքների համար հաշվարկել են 6,106 հազար դրամի կատարողական: Ընդ որում, որևէ նորմով չի

պարտադրվում ջրարբիացման համար կատարվող ջրառն իրականացնել պարտադիր փակ համակարգով և նույն այս ծրագրի շրջանակներում, բազմաթիվ դեպքերում, նախագծվել և իրականացվել են բաց առվակներից և ոռոգման համակարգերից բաց ջրընդունիչներով ջրառներ:

Գեղարքունիքի մարզի Ծակքար համայնքի արոտավայրերի ջրարբիացման ցանցի կառուցման աշխատանքների համար <<Լավո>> ՍՊԸ-ի կողմից 25.09.2015թ-ին տրված թիվ 103-15 փորձաքննության եզրակացության համաձայն նույնպես նախագիծը համապատասխանել է ՀՀ-ում գործող նախագծային նորմերի պահանջներին, սակայն համայնքի ղեկավարի առաջարկով <<... աղբյուրների ջրհավաք կապտաժի սանիտարական վիճակը **վայրի կենդանիների և անասունների** կողմից աղտոտելուց ապահովելու համար ...>> որպես լրացուցիչ աշխատանք, ընդամենը երկու աղբյուրակապի համար, իրականացվել է 1.2 հա տարածքի լրացուցիչ ցանկապատում մետաղական կլոր ճնշումային խողովակներով և դրանց համար կազմվել է 8,921 հազար դրամի կատարողական: Ընդ որում, բացի այն, որ համաձայն փորձագիտական եզրակացության նախագիծը առանց ցանկապատի համապատասխանել է ՀՀ-ում գործող նորմերի պահանջներին, այլ օբյեկտներում ցանկապատ նախագծելիս այն նախատեսվել է փշալարով, ինչը մի քանի անգամ էժան է մետաղական խողովակով ցանկապատից:

Հեղևանք

Փորձաքննությամբ երաշխավորված նախագծերում առանց որևէ հիմնավորման <<երաշխավորված ջրի մաքրություն>> ստանալու և կենդանիներին ջրելու համար նախատեսվող ջուրը նույն կենդանիների կողմից աղտոտելուց պաշտպանելու համար լրացուցիչ վճարվել է 15,027 հազար դրամ:

2.4 Անհամապատասխանություն

Ռստումնասիրությամբ չի հաստատվել փափուկ բնահողերի փոխարեն ժայռային բնահողեր ի հայտ գալու փաստը և չի փոխվել բնահողի կարգը սակայն որպես լրացուցիչ աշխատանք վճարել են ոչնչով չհիմնավորված ժայռային բնահողերի փխրեցման աշխատանքներ 4,512 հազար դրամի չափով:

Գեղարքունիքի մարզի Սարուխան և Կարմիր համայնքների արոտավայրերում ջրարբիացման համակարգի կառուցման ընթացքում կապալառուները դիմել են պատվիրատուին նշվելով, որ որոշ հատվածներում հողային աշխատանքներ կատարելիս հայտնաբերվել են ժայռային գրունտներ, և խնդրել են կատարել համապատասխան ճշտումներ հողային աշխատանքների կարգերում և ծավալներում: Նշված առաջարկներին նախագծող <<Անուշիկ Ջրեր>> ՍՊԸ-ն պատասխանել է, որ <<... բացված

խրամուղու ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մեր կողմից տրված բնահողի մշակման խմբերը (կարգերը) համապատասխանում են ՇՆուԿ 4-2-82 թիվ 1-ի մեջ նկարագրված բնահողերի տեսքերին, սակայն կրային ցեմենտով ուժեղ շաղկապվածության պատճառով բնահողերի մշակման ժամանակ անհրաժեշտություն է առաջացել որոշ հատվածներում կիրառել նախնական փխրեցում և այդ հատվածներում փխրեցումները կկազմեն՝ համապատասխանաբար 500խմ և 700խմ... >>: Նշվածի հիման վրա պայմանագրում կատարվել են փոփոխություններ և լրացուցիչ վճարվել են 500խմ և 700խմ ժայռային գրունտի փխրեցման աշխատանքներ՝ 2,160 հազար դրամի և 2,352 հազար դրամի չափով:

Հեղևանք

Չնայած նրան, որ կապալառուները առաջարկել էին ճշտել գրունտների ժայռային լինելը և նրանց կարգերը և ճշտման արդյունքում արձանագրվել է, որ գրունտները ժայռային չեն և կարգերը չեն փոխվել և ՇՆևԿ IV-2-82 հավաքածուի N 1-ով այդ գրունտների համար նախնական փխրեցում չի պահանջվում, նախագծային կազմակերպության կամայական որոշման արդյունքում (գրունտները ըստ մշակման բարդության կարգերի և նախնական փխրեցման անհրաժեշտության խմբավորված և սահմանված են գործող նորմատիվատեխնիկական փաստաթուղթ հանդիսացող ՇՆևԿ IV-2-82-ով և նախագծային որևէ կազմակերպություն իրավասու չէ այն փոփոխել, քանի որ նորմատիվատեխնիկական

փաստաթղթերը կարող են փոփոխվել միայն ՀՀ կառավարության 26.05.1999թ.-ի թիվ 351 որոշմամբ հաստատված կարգին համապատասխան) կատարողականերով փափուկ գրունտի համար հաշվարկել են 4,512 հազ. դրամի ժայռային գրունտի փխրեցման լրացուցիչ աշխատանքներ:

2.5 Անհամապատասխանություն

ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի արտավայրերում ջրարբիացման ցանցի կառուցման աշխատանքների իրականացման ընթացքում Կապալառուի և համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշվել է չկառուցել 5-րդ ջրատաշտակը: Պայմանագրի փոփոխությամբ նվազեցվել են այդ ջրատաշտակի կառուցման աշխատանքների ծավալները, սակայն չեն նվազեցվել փարախից դեպի 5-րդ խմոց գնացող 139 խմ ավազակոպճային ծածկույթով ճանապարհի կառուցման աշխատանքները, իսկ այդ հատվածի ճանապարհի համար նախատեսված 3-րդ կարգի բնահողի բուլդոզերով 20 մ տեղափոխման աշխատանքները 93 խմ-ով նվազեցվելու փոխարեն ավելացրել են 230 խմ-ով, ինչի արդյունքում կատարողականով ավել է հաշվարկվել 1,092 հազար դրամ:

Բացի նշված փոփոխությունները, առանց պատվիրատուի, կապալառուի և համայնքի ղեկավարի առաջարկի և պահանջի, նախագծային կազմակերպության կողմից, առանց որևէ հիմնավորման, կատարվել են ևս 3,434 հազար դրամի փոփոխություններ: Մասնավորապես,

- թիվ 1 ջրատաշտակում սխեմատիկ ավելացվել է 13գծ.մ Փ225մմ պոլիէթիլենային դրենաժային խողովակ՝ չտալով հստակ կորորդինատները և կտրվածքների չափերը: Փոփոխվել է աղբյուրակապի տեղը, 25 գծմ-ով ավելացնելով Փ50 մմ պոլիէթիլենային խողովակի երկարությունը՝ չնշելով նոր աղբյուրակապի հստակ տեղը՝ կորորդինատները, երկայնական և լայնական կտրվածքները: Նախատեսված 10գծ.մ Փ75մմ պոլիէթիլենային ջրահեռացման խողովակը փոխարինվել է 15 գծ.մ Փ76*3մմ հաստությամբ երկաթյա խողովակով:

- թիվ 2 ջրատաշտակում առաջարկված 20 գծ.մ Փ225 մմ տրամագծով պոլիէթիլենային դրենաժային խողովակի փոխարեն, սխեմատիկ, ցույց է տրվել նախագծված ջրհավաք խողովակին միացող լրացուցիչ 47 գծ.մ դրենաժային խողովակ՝ չնշելով ջրհավաք խողովակին միացման կետի կորորդինատները և խողովակաշարի երկայնական և լայնական կտրվածքները,

- թիվ 4 ջրատաշտակում առաջարկված 20 գծմ դենաժի փոխարեն, սխեմատիկ, առանց կտրվածքների չափերի և հատակագծային դիրքի, ավելացվել է 40 գծ.մ դրենաժային խողովակ:

Հեղևանք

Փոփոխությամբ նվազեցված աշխատանքների ծավալների սխալ հաշվարկի արդյունքում ավել է հաշվարկվել 1,092 հազար դրամի կատարողական և առանց որևէ առաջարկի, հիմնավորման և անհրաժեշտության կատարվել է 3,434 հազար դրամի լրացուցիչ աշխատանքներ:

2.6 Անհամապատասխանություն

«Ը Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի արոտավայրերում ջրարբիացման ցանցի կառուցման ընթացքում համայնքի ղեկավարը դիմել է պատվիրատուին՝ նշելով, որ

Մեկ խմոցը կառուցվել է ոչ թե ծրագրով նախատեսված արոտավայրերում, արոտի ժամանակ անասնահոտը ջրելու համար, այլ բնակավայրում, որոշակի մարդկանց գոմերին մոտ՝ գոմերի անասունները ջրելու համր:

«... 2-րդ խմոցը նպատակահարմար է տեղափոխել գարաժներ կոչվող տարածքում, որպեսզի համայնքի անասնահոտի համար նպատակին ծառայելու: ... ուստի խնդրում ենք Ձեզ կատարել խմոցի տեղափոխություն 420մ ջրագծի տեղափոխմամբ ...»: Սրան ի պատասխան նախագծող «Անուշիկ Ջրեր» ՍՊԸ-ն կատարել է խմոցի տեղափոխում առաջարկված 420 մ-ի փոխարեն 687 մ՝ արդյունքում խմոցը հանվել է արոտավայրերից և նախագծվել է բնակավայրի վարչական սահմաններում, որի

համար կատարվել է պայմանագրային փոփոխություն 6,083 հազար դրամի չափով և կատարված աշխատանքների համար կազմվել է նույն գումարի չափով կատարողական:

Հեղևանք

Փոփոխության արդյունքում 6,083 հազար դրամի աշխատանքեր կատարվել են ծրագրի շրջանակներից դուրս:

2.7 Անհամապատասխանություն

«Ը Շիրակի մարզի Փոքր Մանթաշ և Արթիկ համայնքների արոտավայրերի ջրարբիացման համակարգերի կառուցման ընթացքում կապալառու ընկերությունները դիմել են պատվիրատուին նշվելով որ «... հունիսի 25-ի բնական աղետի պատճառով տեղացած հորդառատ անձրևներն ու տեղետարափ կարկուտը մեծ հեղեղումներ ու

ավերվածությունների պատճառ են դարձել...>>: Միաժամանակ նշել են, որ բնական աղետը մեծ վնասներ է հասցրել նաև շինհրապարակին, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել շինհրապարակում կատարված որոշ աշխատանքներն իրականացնել կրկնակի և ելնելով ստեղծված իրավիճակից, խնդրել են ստեղծել հանձնաժողով՝ <<... վերը նշված իրավիճակը տեղում ուսումնասիրելու, փաստագրելու, հետագա իրականացվելիք աշխատանքներին լուծումներ տալու համար >>

Կապալառուների գնահատմամբ հեղեղ որակված հորդառատ տեղումների հետևանքով նաև կապալարուների կողմից պայմանագրային պարտականությունները չկատարելու արդյունքում վնասված և դեռևս պատվիրատուին չհանձնված աշխատանքների համար կատարվել է 7,762 հազար դրամի աշխատանքների կրկնակի վճարում այն դեպքում երբ գործող օրենսդրությամբ, պայմանագրի պահանջների և վարկատու կազմակերպության ընթացակարգերի համաձայն, այն վճարման եթակա չէ և այդ կորուստը հանդիսանում է կապալառուի ռիսկը:

<<ԳԾԻԳ>> ՊՀ-ի տնօրենի հրամանով ստեղծվել է հանձնաժողով՝ պատճառած վնասները տեղում ուսումնասիրելու, առկա վնասների չափերը ճշտելու և հետագա անհրաժեշտ աշխատանքների իրականացման ուղղությամբ լուծումներ առաջարկելու նպատակով:

Նույն հրամանով հանձնարարվել է հաշվարկել պատճառած վնասի չափը և կազմել համապատասխան ակտ:

Որևէ ակտ և պատճառած վնասի չափի հաշվարկ չի ներկայացվել:

Չնայած նրան, որ պատվիրատուն 04.07.2016թ-ին և 06.07.2016թ-ին է <<

ԱԻՆ-ից և Ջրային տնտեսության պետական կոմիտեից խնդրել տրամադրել մասնագետներ և հանձնաժողովը ստեղծվել է 13.07.2016թ. հրամանով, հանձնաժողովի նիստի արձանագրությունում նշվել է, որ հանձնաժողովը 01.07.2016թ.-ին տեղում ուսումնասիրել է լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտությունը և նշվել է, որ Արթիկ համայնքում պետք է լրացուցիչ կատարվի ավազից նախապատրաստական շերտ 199 խմ, խրամուղու մաքրում 3-րդ կարգի բերվածքներից 323.5 խմ, հետադարձ լիցք փափուկ բնահողից 595 խմ, հետադարձ լիցք 2,815 խմ, իսկ Գ. Փոքր Մանթաշում՝ խրամուղու մաքրում բերվածքներից 3-րդ կարգ 1,786 խմ և հետադարձ լիցք 252 խմ...>>

Նշված արձանագրության հիման վրա կապալառուների հետ կազմվել են պայմանագրերի փոփոխություններ Փ. Մանթաշի համար 3,030 հազար դրամի չափով, իսկ Արթիկի համար 4,731 հազար դրամի չափով, որտեղ ներառվել են նաև վերը նշված արձանագրությունում չնշված լրացուցիչ աշխատանքներ, Փ. Մանթաշում 1,534 խմ ավելորդ

բնահողի հարթեցման աշխատանքներ՝ գումարով 772 հազար դրամ և Արթիկ համայնքում 2,200 մ պոլիէթիլենային խողովակաշարի վերատեղադրման աշխատանքներ՝ 693 հազար դրամի:

Նշված պայմանագրային փոփոխությունների շրջանակներում կատարված լրացուցիչ աշխատանքների համար կազմվել են համապատասխանաբար 3,030 հազար դրամի և 4,731 հազար դրամի կատարողական ակտեր, այնինչ աշխատանքների իրականացման ընթացքում անձրևներից առաջացած մակերևույթային ջրերից կորուստները կապալառուին փոխհատուցելը պայմանագրերով և որևէ այլ իրավական ակտով նախատեսված չէ: Բացի այդ, վարկատու կամակերպության ընթացակարգերով նախատեսված պայմանագրերի ընդհանուր պայմաններով աշխատանքների մեկնարկի օրվանից մինչև թերությունների վերացման վկայագրի տրման պահը անձնական վնասվածքի, մահվան, ինչպես նաև գույքի կորստի կամ վնասի ռիսկերը (ներառյալ աշխատանքները, նյութերը, կայանքներն ու սարքավորումներն առանց սահմանափակման), որոնք չեն հանդիսանում պատվիրատուի կամ նախագծի սխալի հետևանք, կամ ուղղակիորեն աշխատանքների իրականացման երկրի վրա ազդող պատերազմի ու ռադիոակտիվ աղտոտման հետևանք, հանդիսանում են կապալառուի ռիսկերը: Համաձայն պայմանագրերի և նախագծերի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական մասնագրգրի 3.4.2 կետերի ինժեների հավանությամբ կամ ցուցմունքով կապալառուն պետք է կառուցվածքների անհրաժեշտ պաշտպանական միջոցներ ձեռնարկի մակերեսային ջրերից պաշպանվելու համար՝ կառուցելով ժամանակավոր պատվարներ, պատեր, ճիմեր, իսկ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 703-րդ հոդվածի 1-ին կետի 2) ենթակետի՝ կատարված աշխատանքի արդյունքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը՝ մինչև պատվիրատուի կողմից այն ընդունելը, կրում է կապալառուն, հետևաբար հորդառատ անձրևից առաջացած կորուստները, հանդիսանում են կապալառուների ռիսկերը և փոխհատուցման ենթակա չեն:

Հետևանք

Օրենսդրական և պայմանագրային պահանջներին չհամապատասխանող կարգով կատարվել է 7,762 հազար դրամի լրացուցիչ վճարման չենթակա աշխատանքների ընդունում և վճարում:

Անհամապատասխանություն

Թվով 9 օբյեկտներում, որոնցում կատարված աշխատանքների համար կազմվել են 746,128 հազար դրամի կատարողականներ, մեր կողմից կատարվել է 97,290 հազար դրամի աշխատանքների փաստացի վիճակների ուսումնասիրություն: Ուսումնասիրությամբ արձանագրված և կատարողական ակտերում հաշվարկված ծավալների համադրումից թվով

3 օբյեկտներում տարբերություններ չեն արձանագրվել, իսկ թվով 6 օբյեկտներում փաստացի տեղում կատարվածից կատարողական ակտերով այլ աշխատանքներ և ավել ծավալներ ցույց տալու արդյունքում ավել է հաշվարկվել 13,410 հազար դրամ: Բացի այդ, թվով երկու օբյեկտում արձանագրվել է 936 հազար դրամի կրկնակի կատարման ենթակա աշխատանք:

Հեղևանք

Կատարողական ակտերով փաստացի կատարածից այլ աշխատանքներ և ավել ծավալներ ցույց տալու արդյունքում ավել է հաշվարկվել 13,983 հազար դրամի կատարողական: Բացի այդ աշխատանքները ոչ պատշաճ կատարելու արդյունքում առաջացել է 936 հազար դրամի աշխատանքների կրկնակի կատարման անհրաժեշտություն:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անհամապատասխանություն

Ծածկված աշխատանքների ընդունման ակտերի կազմումը կրել է ձևական բնույթ: Նրանք կազմվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ-ի թիվ 44 հրամանով հաստատված պահանջներին ոչ համապատասխան՝ ակտերի վրա բացակայում են ամսաթվերը և նրանք հաստատված չեն պատվիրատուի կողմից, առանձին դեպքերում ծածկված աշխատանքների ընդունման ակտերը կազմվել են նաև աշխատանքների տեխնոլոգիական հերթականությունը չպահպանելով, առանձին ակտավորման ենթակա

Աշխատանքների կատարման և որակի հաստատման և վերահսկողական գործառույթները չեն իրականացվել ամբողջ ծավալով և կրել են ձևական բնույթ: Չեն կազմվել աշխատանքների ընդհանուր արժեքում զգալի՝ առանձին դեպքերում մինչև 30%-ի հասնող խրամուղիների մշակման աշխատանքների կատարումը և որակը հավաստելու համար մասնագրով սահմանված երկայնական պրոֆիլները և լայնական կտրավածքները աշխատանքների կատարումից առաջ և հետո:

աշխատանքների ընդունման համար կազմվել է մեկ ընդհանրական ծածկված աշխատանքի ընդունման ակտ: Մասնավորապես՝ խրամուղու փորման աշխատանքների ծածկված աշխատանքների ընդունման ակտը կազմելուց հետո միայն պետք է թույլատրվեր իրականացնել ավազից նախապատրաստական շերտի աշխատանքների իրականացումը և դրանից հետո այդ աշխատանքի

համար կազմվեր առանին ծածկված աշխատանքների ընդունման ակտ, այնինչ միանգամից կազմվել է խրամուղու փորման և ավազի նախապատրաստական աշխատանքների ծածկված աշխատանքների ընդունման ակտեր: Բացի այդ, բոլոր ակտերում արձանագրված է, որ լուսանկարները կցվում են, սակայն հաշվեքնությանը որևէ լուսանկար չի ներկայացվել:

Համաձայն պայմանագրերի և նախագծերի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական մասնագրերի կապալառուն պատվիրատուին պետք է հանձներ

1) պայմանագիրը կնքելուց 7 օրվա ընթացքում աշխատանքների կատարման ընդհանուր մեթոդները և ավարտման ժամանակացույցերը:

2) կատարողական գծագրեր, որոնց վրա պետք է պարզ նշված լինեին տեղադրությունները, խորությունները, թեքությունները, բարձրությունները, բոլոր հիմնական կառուցվածքների ձևերն ու չափերը, այնպես, ինչպես դրանք իրականացվել են:

3) Աշխատանքների կատարումը և որակը հավաստելու համար

✓ տեղամասի երկայնական պրոֆիլը աշխատանքների կատարումից առաջ և հետո, լայնակի կտրվածքները 25 մ չգերազանցող ինտերվալներում աշխատանքների կատարումից առաջ և հետո, վկայակոչել հողային փորվածքի նախագծային մակարդակը: Լայնակի կտրվածքները պետք է ընդգրկեին այն լայնությունը, որ անհրաժեշտ է եղել շինարարական և գրունտային աշխատանքների համար:

✓ Բոլոր դաշտային մատյանները, հաշվարկները, քարտեզները և այլ գեոդեզիական նյութերը պետք է հանձնվեին ինժեներին այդ աշխատանքների ավարտից հետո:

✓ Բոլոր տվյալները, որոնք ստացվել էին գեոդեզիական աշխատանքներից, պետք է մտցվեին դաշտային մատյանների մեջ և հանձնվեին ինժեներին:

✓ Լուսանկարչական ալբոմներ՝ աշխատանքների ընթացքի, ավարտված աշխատանքների ռետուշավորված լուսանկարների օրինակներով և նեգատիվներով թվագրված և վերնագրված:

4) Կանոնավոր ամսական հաշվետվություններ, որտեղ պետք է նշված լինեին՝

✓ նախորդ ամսվա կատարված աշխատանքները և աշխատանքները, որոնք սկսվում են ընթացիկ ամսում

✓ օրացուցային պլանի կատարումը

✓ ամսեկան հաշվարկային ծախսերը

✓ սարքավորումների և նյութերի գույքագրման ցուցակը

✓ հաշվետու ամսվա ընթացքում և ամբողջ շինարարության սկզբից ձեռք բերված նյութերի հաշվետվությունը

Նշված պահանջներից և ոչ մեկը չի իրականացվել (մանրամասը տես հավելված 3): Ստուգմանը ներկայացվեցին ընդամենը յուրաքանչյուր օբյեկտում մեկ կամ առավելագույնը երկու օբյեկտում կատարված մի քանի չթվագրված և չվերնագրված թվային լուսանկարներ, որոնք չեն արտացոլում շինարարության ընթացքը և ավարտը:

Աշխատանքների ավարտների ժամկետները 40 պայմանագրերի դեպքում երկարացվել են:

Հեղևանք

40 պայմանագրերի դեպքում երկարացվել են աշխատանքների ավարտների ժամկետները որոնցից մի քանիսի դեպքում ժամկետները երկարացվել են մի քանի անգամ: Չի իրականացվել պատշաճ վերահսկողություն աշխատանքների կատարման ընթացքի և որակի նկատմամբ: Կատարողական գծագրերի չկազմումը հետագայում կդժվարեցնի նաև ջրարբիացման ցանցի պատշաճ շահագործումը:

III. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԶՐԱՐԲԻԱՑՈՒՄ, ՑԱՆՑԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՇՏԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՆՑԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության և վերակառուցման եվ զարգացման միջազգային բանկի միջև 06.08.2014թ. ստորագրվել է Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի վերաբերյալ թիվ 8374 -ԱՄ վարկային համաձայնագիրը:

Ծրագրի նպատակներն են՝

ա) բարելավել արոտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականությունն ու կենսունակությունը նպատակային համայնքներում.

բ) ավելացնել ընտրված անասնապահական և բարձրարժեք ագրոպարենային արժեչղթաների արտադրանքի շուկայահանումը:

Ծրագրի բաղադրիչներն են՝

ԲԱՂԱԴՐԻՉ 1՝ Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ,

ԲԱՂԱԴՐԻՉ 2՝ Արժեչղթայի զարգացում,

ԲԱՂԱԴՐԻՉ 3՝ Պետական կառույցների կարողությունների հզորացում,

ԲԱՂԱԴՐԻՉ 4՝ Ծրագրի համակարգում և կառավարում:

Հաշվեքննվող ժամանակաշրջանում շինարարական աշխատանքն իրականացնելու համար կնքվել են թվով 56 պայմանագրեր 3,144,720 հազար դրամ վերջնական պայմանագրային գներով, որից Բաղադրիչ 1-ի՝ «համայնքային արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգի» շրջանակներում թվով 51 պայմանագրեր 2,844,688 հազար դրամ ընդհանուր պայմանագրային գնով և Բաղադրիչ 3-ի՝ «պետական հատվածի կառույցների ուժեղացում» շրջանակում թվով 5 պայմանագրեր 300,032 հազար դրամ ընդհանուր պայմանագրային գնով:

Նշված պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների համար կազմվել են 2,499,986 հազար դրամի կատարողական ակտեր, որից Բաղադրիչ 1-ով՝ 2,200,942 հազար դրամի, և բաղադրիչ 3-ով՝ 299,044 հազար դրամի:

Ստուգմամբ ընգրկված ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել նաև մինչև 2016թ.-ը՝ թվով 14 Կապալառուների հետ կնքված, 1,052,895 հազար դրամ ընդհանուր պայմանագրային գնով, թվով 15 պայմանագրերի շրջանակներում, որից Բաղադրիչ 1-ի

շրջանակներում՝ թվով 13 պայմանագրեր՝ 861,331 հազար դրամ պայմանագրային գնով, և Բաղադրիչ 3-ի շրջանակներում՝ թվով 2 պայմանագրեր՝ 191,563 հազար դրամ պայմանագրային գնով: Նշված պայմանագրերի շրջանակներում ստուգմամբ ընդգրկված ժամանակաշրջանում կատարված աշխատանքների համար կազմվել են 734,011 հազար դրամի կատարողական ակտեր, որից Բաղադրիչ 1-ով՝ 613,933 հազար դրամի, և բաղադրիչ 3-ով՝ 120 հազար դրամի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Շինարարական աշխատանքների նախագծային ծավալների հաշվարկներում անհամապատասխանությունների արդյունքում կատարողական ակտերով ավելի են հաշվարկվել 27,456 հազար դրամ իսկ պայմանագրով 8,918 հազար դրամ:
2. Շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքներում անհամապատասխանությունների արդյունքում նախահաշիվներն ավելի են հաշվարկվել 286,077 հազար դրամով:
3. Շինարարական աշխատանքների պայմանագրային գները գերազանցել են ճշտված նախահաշվային արժեքները 196,053 հազար դրամով:
4. Շինարարական աշխատանքների պայմանագրով պատվիրված աշխատանքների տեսակների և ծավալների փոփոխություններ արդյունքում տեղի է ունեցել աշխատանքների թանկացում 25,550 հազար դրամի չափով:
5. Շինարարական աշխատանքների պայմանագրային փոփոխությունների ժամանակ փոփոխվող աշխատանքների ծավալների, լրացուցիչ աշխատանքների տեսակների սխալ հաշվարկման և փոխհատուցման չենթակա լրացուցիչ աշխատանքների հաշվարկման արդյունքում ավելի են հաշվարկվել 13,336 հազար դրամ:
6. Շինարարական աշխատանքների փոփոխության ընթացքում սխալ հիմնավորմամբ լրացուցիչ աշխատանքներ ավելացնելու հետևանքով հաշվարկվել և վճարվել է 3,468 հազար դրամի կատարողական:
7. Շինարարական աշխատանքների փոփոխության ընթացքում ծրագրի շրջանակներից դուրս կատարված աշխատանքների համար հաշվարկվել է 6,083 հազար դրամի կատարողական:

8. Շինարարական աշխատանքների ընթացքում չհիմնավորված առաջարկությունների հիման վրա փորձաքննությամբ երաշխավորված նախագծերում փոփոխություններ կատարելու արդյունքում կատարողական ակտերով հաշվարկվել և 15,027 հազար դրամ:
9. Շինարարական աշխատանքների ընթացքում առանց որևէ առաջարկի, հիմնավորմամբ և անհրաժեշտության կատարված փոփոխության արդյունքում հաշվարկվել է 3,557 հազար դրամի կատարողական:
10. Շինարարական աշխատանքների կատարողական ակտերով փաստացի կատարվածից այլ և ավել աշխատանքներ ցույց տալու արդյունքում ավելի են հաշվարկել 13,410 հազար դրամի կատարողական:
11. Թվով երկու օբյեկտում արձանագրվել է 936 հազար դրամի կրկնակի կատարման ենթակա աշխատանք:
12. Աշխատանքների կատարման և որակի հաստատման և վերահսկողական գործառույթները չեն իրականացվել ամբողջ ծավալով և դրանց կատարումը կրել է ձևական բնույթ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերում հիմնավորել ժայռային բնահողերի փխրեցման եղանակի ընտրությունը:
2. Նախահաշիվներում հաշվարկել միայն նախագծով և ՇՆուԿ-ներով նախատեսված աշխատանքները:
3. Նախահաշիվները հաշվարկել տնտեսապես ամենաշահավետ գներով:
4. Բացառել նախագծային նիշերով և չափերով հաշվարկի դեպքում ստացվող աշխատանքների ծավալներից այլ ծավալներ նախագծի մասնագրերում և ծավալաթերթում նշելը և նախահաշվում հաշվարկելը:
5. Բացառել դաշտային ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտությունների, արխիվային հաշվետվությունների ուսումնասիրության և կամերալ աշխատանքների ամփոփման արդյունքում սահմանված բնահողի շերտերի հաստություններին չհամապատասխանող հաստությունների կիրառումը:
6. Բացառել չհինավուրձ լրացուցիչ աշխատանքների կատարումը:
7. Փոփոխություններ իրականացնելիս վերլուծել կատարվող փոփոխությունների համարժեքությունը և անհամապատասխանության դեպքում սահմանել ավելացվող աշխատանքների համարժեք միավոր գներ:
8. Բացառել աշխատանքները նորմերին համապատասխանացնելու հղումով անհիմն առաջարկների հիման վրա լրացուցիչ աշխատանքերի իրականացումն այն դեպքում, երբ առա է փորձագիտական եզրակացություն առ այն, որ նախագծված աշխատանքները համապատասխանում են գործող բոլոր նորմատիվային պահանջներին:
9. Մշակել մեխանիզմներ, որ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանելու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարի տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Շեղում համարել աշխատանքների կատարման ընթացքում լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը կամ կատարված աշխատանքների փոփոխությունը (քանդում, վերակառուցում և այլն): Կորուստ համարել

նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը՝ ներառյալ ԱԱՀ-ն, գերազանցող շեղումների հանրագումարի չափը:

10. Բացառել նորմերով փխրեցում չպահանջող բնահողերի համար փխրեցման աշխատանքների հաշվարկման դեպքերը:
11. Աշխատանքներն իրականացնելիս չշեղվել ծրագրից:
12. Պատահական կորստի փոխհատուցում կատարել միայն օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված դեպքերում:
13. Բացառել կատարողական ակտերով փաստացի տեղում կատարվածից այլ աշխատանքներ և ավել աշխատանքներ հաշվարկելը և աշխատանքների ոչ պատշաճ կատարումը:
14. Աշխատանքների իրականացման և ընդունման ժամանակ առաջնորդվել տեխնիկական մասնագրերի, գործող նորմերի և աշխատանքի որակի տեխնիկական հսկողության կարգի պահանջներով, առավել ուշադրություն դարձնել հսկողության գործընթացների արդյունավետ և պատշաճ իրականացման վրա, բացառել դրանց ձևական իրականացումը:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հաշվեքննության օբյեկտի ղեկավարը, ընթացիկ եզրակացությունն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվեքննիչ պալատին տրամադրում է ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում կազմվել և ծանոթացման և ստորագրման նպատակով ստուգվող օբյեկտին են ներկայացվել երկու արձանագրություններ, որին ի պատասխան առարկությունները և բացատրությունները ներկայացվել են «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետի ուշացումով:

Մեր կողմից ուսումնասիրվել են ներկայացրած առարկությունները, որոնց մի մասը ընդունվել է և ստուգման արդյունքներում կազմված արձանագրություններում արձանագրված որոշակի անհամապատասխանություններ ընթացիկ եզրակացությունում շտկվել են, իսկ առարկությունների հիմնական մասը չի ընդունվել հիմնավոր չլինելու հիմքով, իսկ որոշ դեպքերում առարկություն վերնագրվածները ըստ էության պարզաբանումներ են:

Ներկայացրած առարկությունները կցում ենք:

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում իրականացվող հաշվեքննության շրջանակում գյուղատնտեսության զարգացման հիմնադրամում իրականացված ստուգման վերաբերյալ

II. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ

1. Նախագծանախահաշվային փաստաթղթեր

Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմվել են թվով 8 ընկերությունների կողմից և նրանց ընդհանուր նախահաշվային արժեքը հաշվարկվել է 4,360,801 հազար դրամ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ

- Ժայռային ապարների փխրեցման աշխատանքները <<Անուշիկ ջրեր>> ՍՊԸ-ի, <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ի, <<Ջրարբի>> ՍՊԸ-ի, <<Ունո Փրոջեքթ>> ՍՊԸ-ի և <<Գիտեպինվեստ>> ՍՊԸ-ի կողմից հաշվարկվել են որպես հիդրոմուրճով փխրեցման աշխատանքներ, որոնց համար ՀՀ-ում գործող նորմատիվային գնացուցակներ (միավոր նորմատիվային նախահաշվային արժեքներ) չկան: Տարբեր ընկերությունների կողմից նախահաշվային ուղղակի ծախսերում կիրառվել են միմյանցից էականորեն տարբերվող՝ մինչև 2,9 անգամ, նախահաշվային արժեքներ, օրինակ VII-րդ կարգի ժայռային բնահողի 1խմ-ի հիդրոմուրճով փխրեցման աշխատանքների նախահաշվային արժեքն, ուղղակի ծախսերում, <<Անուշիկ ջրեր>> ՍՊԸ-ն ընդունել է 5.5 հազար դրամ (անուղղակի ծախսերով շուրջ 9.3 հազար դրամ), իսկ <<Գիտեպինվեստ>> ՍՊԸ-ն 15.95 հազար դրամ (անուղղակի ծախսերով 27 հազար դրամ): Ընդ որում <<Ջրարբի>> ՍՊԸ-ն և <<Անուշիկ ջրեր>> ՍՊԸ-ն նույնիսկ իրենց կողմից կազմված տարբեր օբյեկտների նախահաշիվներում կիրառել են միմյանցից մինչև 2,5 անգամ տարբերվող նախահաշվային միավոր արժեքներ: Օրինակ <<Անուշիկ ջրեր>> ՍՊԸ-ն V ըրդ կարգի ժայռային բնահողի 1խմ-ի հիդրոմուրճով փխրեցման աշխատանքների նախահաշվային արժեքներն ուղղակի ծախսերում տարբեր օբյեկտներում ընդունել են 2.0 հազար դրամ, 3.8 հազար դրամ, 4.5 հազար դրամ և 5.0 հազար դրամ: Մանրամասը ըստ բնահողի մշակման կատեգորիաների և ընկերությունների ներկայացված է ստորև աղյուսակում

Նախագծային կամակերպություն	Բնահողի մշակման կարգը
----------------------------	-----------------------

	5-րդ	6-րդ	7-րդ
	Միավոր արժեքը ուղղակի ծախսերում (հազար դրամ)		
<<Անուշիկ ջրեր>> ՍՊԸ	2	3.5	5.5
	3.8	4.5	6.5
	4.5	5.5	7.5
	5.0		9.0
<<ՀԳՇՆ>> ՍՊԸ		5.5	6.5
<<<Ջրարբի>> ՍՊԸ	5.5	5.5	6.5
		3.0	
< Ունո Փրոջեքթ ՍՊԸ	4.5		15.95
<<Գիտեպինվեստ>>ՍՊԸ			6.5

Որպես այս աշխատանքների նախահաշվային արժեքների կիրառման նորմատիվային հիմքեր նախահաշիվներում նշել են <<շուկա>>, <<ինֆորմ>>, <<գնահաշվարկ>>, <<ՎՀ-144, 01.07.2015թ>> կամ <<1-993 մեք, 1-1553 աշխ>>: Վերջին դեպքում, առանց որևէ հիմնավորման, այդ աշխատանքների համար վերցրել են շերտի 0.5 խմ տարողությամբ էքսկավատորով 5-րդ կարգի բնահողի քանդման նորմատիվային աշխատավարձի և ձեռքով հիդրոնորճի օգնությամբ 7-րդ կարգի բնահողի քանդման աշխատանքների մեքենամեխանիզմի նորմատիվային ծախսի հանրագումարը: 02.10.2018թ.-ի ՀՊԵ-ԱԳ-73 գրությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից խնդրել ենք տրամադրել նախահաշիվներում բնահողի փխրեցման աշխատանքները հիդրոնորճով հաշվարկելու հիմնավորումները և այդ աշխատանքների համար կիրառված նախահաշվային հիմքերը, ինչին ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատարը, 08.10.2018թ.-ի թիվ ԳՊ/ԳԳ/7995-18 գրությամբ, պատասխանել է, որ տվյալ տեղեկատվությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարության և հիմնադրամի կողմից ենթակա չէ տնօրինման և առկա չէ: Միաժամանակ նշել է, որ <<... բացի այդ, հաշվի առնելով նշած հանգամանքը, հիմնադրամի կողմից համապատասխան հարցում է կատարվել շինարարական կամակերպություններին և վերջինիս կողմից ներկայացված տեղեկատվությունն աշխատանքային կարգով ներկայացվել է Ձեզ ...>>, սակայն այդ հարցադրմանը առնչվող որևէ տեղեկատվություն աշխատանքային կարգով չի տրամադրվել: Բացի այդ, շինարարական կազմակերպությունները որևէ առնչություն չէին կարող ունենալ նախահաշվային արժեքների հետ կապված պահանջվող հիմնավորումների և հիմքերի հետ: **Մեր կողմից**

նախագծային ընկերությունների կիրառած, հերևապես շուկայում առկա, ամենացածր՝ նվազագույն շահավետ նախահաշվային միավոր արժեքներով կապարված վերահաշվարկներից պարզվել է, որ թվով 34 օբյեկտների նախահաշվային արժեքները 88,223 հազար դրամով գերազանցում են այդ հաշվարկներով ստացվող նախահաշվային արժեքները (ըստ օբյեկտների փես հավելված 3-ը):

Առարկություն՝

Ըստ նախագծող ընկերությունների ներկայացրած պարզաբանումների Ժայռային բնահողերի հիդրոմուրճով մեխանիկական փխրեցման գնահաշվարկը ընդունվել է՝

-մինչև 2016թ – որպես շուկայական արժեք՝ շինարարական մոտ 5 կազմակերպությունների կողմից բանավոր ստացված գնահաշվարկների արժեքների մինիմալ արժեքի մոտ 75%-չափով: Կիրառված շուկայական արժեքները ունեն տատանումներ կախված փխրեցման ենթակա “առարկայից” –խրամուղի է, փոստրակ է, հարթակի բացում է կամ այլն: Փխրեցման արժեքը կարող է փոփոխվել նաև փխրեցման ենթակա նույն կարգի պատկանող Ժայռային բնահողերի ֆիզիկա-մեխանիկական հատկություններից ելնելով (ամրություն, հողմնահարություն և այլն):

- 2016թ-ից ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ՎՀ-144 01.07.2015թ. ընդունված գնահաշվարկի արժեքը, որը մոտ է խրամուղու պայթեցման արժեքին, որը նույնպես կարող է փոփոխվել մարզից և ժամանակահատվածից ելնելով:

Փխրեցման արժեքը կարող է փոփոխվել նաև փխրեցման ենթակա նույն կարգի պատկանող Ժայռային բնահողերի ֆիզիկա-մեխանիկական հատկություններից ելնելով (ամրություն, հողմնահարություն և այլն):

Քանի դեռ իրավասու կազմակերպության կողմից Ժայռային բնահողերի մեխանիկական փխրեցման վերաբերյալ լուծում և գնահաշվարկ չի տրվել՝ Ժայռային բնահողերի հիդրոմուրճով մեխանիկական փխրեցման արժեքը կտատանվի և չի կարող ունենալ ֆիկսված արժեք:

Ներկայացված աղյուսակում և բացատրագրում առկա են իրար չհամապատասխանող տեղեկություններ՝ օրինակ նշված է որ <<Գիդեպինվեստ>> ՄՊԸ-ի կողմից կամզված նախահաշվում այն ընդունվել է 15.95 հա. դրամ (անուղղակի ծախսերով 27 հազ. դրամ) սակայն աղյուսակում նշված միավորը կիրառել է < Ունտ Փրոջեքթ>> ՄՊԸ-ն, սակայն նա կիրառել է ոչ թե շուկա այլ նորմատիվային <<1-993, 1-1553 նախահաշվային գնացուցակը, որը գործում է: Ժայռային ապարները նույնիսկ նույն կարգի լինում են շատ տարբեր և նախագծային կազմակերպությունը հաշվի առնելով բոլոր հանգամանքները որոշում է փխրեցման աշխատանքների կիռարման գինը:

25.09.2018թ. էլեկտրոնային փոստով ստուգումն իրականացնող մարմնին են տրամադրվել նախագծող կազմակերպությունների կողմից ներկայացված պարզաբանումները ժայռային բնահողերի հիդրոմուրճով մեխանիկական փխրեցման գնահաշվարկի վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել հետևյալը.

Ժայռային ապարների հիդրոմուրճով փխրեցման աշխատանքների շուկայական արժեքը ճշտելու համար նախագծողների կողմից հարցումներ են արվում մոտ 5 համապատասխան մասնագիտացված տարբեր կազմակերպություններից: Այդ կազմակերպությունները ներկայացնում են ոչ թե ժայռային բնահողի 1խմ-ի հիդրոմուրճով փխրեցման գինը, այլ համապատասխան տեխնիկայի 1 ժամվա վարձակալման/շահագործման գինը: Մինիմալ գինը ընտրելուց հետո, 1խմ-ի փխրեցման արժեքը որոշելու համար նախագծողի կողմից կատարվում է հաշվարկ, ուր հաշվի է առնվում՝ փխրեցման ենթակա «առարկան» - խրամուղի է, փոստրակ է, հարթակի բացում է կամ այլն, շին. օբյեկտի հեռավորությունը, քանի որ 5կմ-ից ավել հեռավորության դեպքում գումարվում են տեղափոխման ծախսերը, ժայռային ապարների ընդհանուր ծավալը, դրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները (ժայռային ապարները նույնիսկ նույն կարգի լինում են շատ տարբեր) և այլն: Տարբեր ժամանակահատվածներում գները կարող են տարբեր լինեն նաև կապված վառելիքի գների տատանման հետ: Վերը նշվածից պարզ է, որ շուկայական արժեքները չեն կարող լինեն բոլոր օբյեկտների համար նույնը: Արժեքի հաշվարկներում հնարավոր են նաև վրիպումներ:

• Պոլիտեխնիկային խողովակների մոնտաժման աշխատանքների նախահաշվային միավոր արժեքներում, համաձայն ՇՆուԿ IV-2-82 հավաքածու 22-ի ներառված են նաև խողովակաշարը մինչև 10սմ հաստությամբ բնահողով հետլիցքի աշխատանքների արժեքները հետևաբար որպես առանձին աշխատանք հաշվարկված բնահողի հետլիցքի աշխատանքների ծավալներից պետք է նվազեցվեն խողովակաշարերի տեղադրման աշխատանքների նախահաշվային արժեքներում ներառված հետլիցքի շերտի ծավալները ինչը չի կատարվել: **Արդյունքում թվով 41 օբյեկտներում նախահաշիվները ավել են հաշվարկվել 28,086 հազար դրամով (մանրամասը ըստ օբյեկտների փես հավելված 4):**

Առարկություն՝

Ըստ նախագծող ընկերությունների ներկայացրած պարզաբանումների ՇՆուԿ IV-2-82-ի 22 հավաքածուի 22-8 աղյուսակում նշված է բնահողի ցանում (присыпка) 10սմ հաստությամբ, որտեղ՝ խողովակի ստորին հատվածում, թե խողովակի վրա, խրամուղու ամբողջ լայնությամբ թե միայն գոգերում (пазуха): Պարզ է, որ եթե լինեք խողովակի վրա ապա գոնե կգրեին обсыпка трубы, ոչ թե присыпка трубы:

Համաձայն ՇՆՆԿ 3.02.01-83 -ի կետ 4.9-ի խողովակաշարի առաջնային հետլիցքը իրականացվում է մինչև 20սմ խողովակի վերին նիշը՝ ձեռքով, փափուկ բնահողերով, հավասարաչափ շերտային տոփանումով խողովակի երկու կողմից գոգերի լցումով:

22-8 աղյուսակում նշված բնահողի ցանումը չի կարող փոխարինել խողովակի հետլիցքը տոփանումով:

Համաձայն ЕННР (единые нормы и расценки на строительные, монтажные и ремонтно строительные работы, 1987г.) сборник Е9, выпуск 2, таблица Е9-2-7, որը հիմք է հանդիսանում ՇՆՆԿ IV-2-82 համար, պոլիէթիլենային խողովակների մոնտաժման աշխատանքների կազմում “присыпка грунтом” աշխատանք չկա: Այն է՝

- Строповка и опускание звеньев труб в траншею
- Укладка звеньев труб на основание с подбивкой грунта
- Установка и закрепление концов труб
- Обработка торцов труб под сварку
- Сварка стыка

Բացի այդ, աշխատանքների կատարման համար սահմանված օղակի կազմում նշված է՝

մոնտաժող 4-րդ կար - 1 մարդ

մոնտաժող 3-րդ կարգ - 2 մարդ:

Հողափոր չկա:

Այսինքն, պոլիէթիլենային խողովակների մոնտաժման աշխատանքներում հողափորի ոչ աշխատուժի ծախս, ոչ աշխատավարձ հաշվարկված չէ:

Համաձայն ЕННР таблица Е2-1-58 ձեռքով հետլիցք կատարելու համար նախատեսված օղակի կազմն է՝

հողափոր 2-րդ կարգ -1 մարդ

հողափոր 1-րդ կարգ -1 մարդ:

Չի կարող նախատեսվել ցածր որակավորման աշխատանքների կատարումը բարձր կարգ ունեցող բանվորների կողմից:

Согласно ЕННР (единые нормы и расценки на строительные, монтажные и ремонтно строительные работы, 1987г.) сборник Е9, выпуск 2, таблица Е9-2-7 в состав работ на укладку полиэтиленовых труб входят следующие виды работ:

- Строповка и опускание звеньев труб в траншею

- *Укладка звеньев труб на основание с подбивкой грунта*
- *Установка и закрепление концов труб*
- *Обработка торцов труб под сварку*
- *Сварка стыка*

Согласно СНИП IV-2-82, (1983г.) сборник 22, таблица 22-8 в состав работ на укладку полиэтиленовых труб входят следующие виды работ:

- *Торцовка концов труб*
- *Свакра труб в плети*
- *Опускание и укладка плетей труб в траншею*
- *Гидравлическое испытание*
- *Присыпка трубопровода слоем грунта 10см*

Норма времени (затраты труда) на монтаж 1м (условно Д100мм) полиэтиленовой трубы по ЕНиР согласно таблице Е9-2-7 составляет 0.01 чел. час +0.125 чел. час=0.135 чел. час

Норма времени на монтаж 1м (условно Д100мм) полиэтиленовой трубы по СНИП IV-2-82 сборник 22, согласно таблице 22-8 составляет 0.119 чел. час.

Затраты труда (для трубы Д100мм на 1м траншеи объем обратной засыпки -0.21м³) только на обратную засыпку с послойно трамбовкой составляет:

- *согласно Е2-1-58 – 0.19чел. час*
- *согласно СНИП IV-2-82 таблица 1-81 – 0.21чел. час*

Исходя из выше сказанного в затратах труда по СНИП IV-2-82, (1983г.) сборник 22, таблица 22-8, не могут быть включены работы по обратной засыпке исходя из того, что только затраты труда по обратной засыпке составляют 0.21чел. час (таб.1-81), а по таблице 22-8 затраты труда на весь состав работ по монтажу плюс гидравлическое испытание составляет 0.119чел. час.

Հավելված 4-ում կատարված հաշվարկները անհասկանալի է և ընդունելի չէ:

• Բնահողի տեղափոխման աշխատանքների արժեքները հաշվարկելիս կիրառել են ՀՀ-ում չգործող գնացուցակներ, այնինչ, համաձայն ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ»-ի 20-րդ կետի, այն պետք է ընդունվեր շահագործող կամ շինարարական կազմակերպությունների գներով ինչը ՀՀ-ում, որպես կանոն, հանքում աշխատելու դեպքում փոքր հեռավորությունների համար կազմում է մեկ տ-ն մեկ կմ փոխադրելու համար 250 դրամ ներառյալ բոլոր ծախսերն ու հարկերը: ***Նշվածի արդյունքում 16 նախահաշիվներում ավել է հաշվարկվել 44,488 հազար դրամ (մանրամասը տես հավելված 5):***

Առարկություն՝

Ըստ նախագծող ընկերությունների ներկայացրած պարզաբանումների համաձայն 26.06.2018թ. 03/14.1/2962-18 նամակի տրված ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՇՆԿ IV-4-82 նորմատիվային ժողովածուն համարվում է գործող ՀՀ տարածքում, ուստի բնահողերի տեղափոխման աշխատանքների արժեքների հաշվարկը կատարվել է առանց նորմերի խախտումների:

Ստուգումն իրականացնողի կողմից Ոհանքում աշխատելու դեպքում[] բերված գինը կիրառելի չէ բարձր լեռնային արտավայրերում: Ոչ ճանապարհների վիճակը, ոչ ավտոմեքենաների բեռնատարությունը, ոչ այլ պայմանները չեն համապատասխանում:

- Համաձայն ՇՆուԿ IV.2.82 –ի (հավաքածու 1, տեխնիկական մաս, ընդհանուր դրույթներ բաժնի կետ 1.8 և աշխատանքների ծավալների հաշվարկման կանոններ բաժնի կետ 2.3)-ի բնահողի մշակման աշխատանքներում լրամշակման աշխատանքների ծախսի հաշվարկում այդ աշխատանքների մեթոդը և ծավալը պետք է ընդունվի աշխատանքային նախագծում և աշխատանքների կազմակերպման նախագծում նշված ծավալին և մեթոդին համապատասխան, ինչպես նաև ՇՆուԿ III-8-76-ին համապատասխան: Նշված ՇՆուԿ-ն ուժը կորցրել է ՇՆուԿ 3.02.01-87-ն ուժի մեջ մտնելուց հետո: ՇՆուԿ III-8-76-ի 3.33 կետով սահմանված է, որ, որպես կանոն, բնահողի լրամշակումը պետք է կատարվի մեխանիզացված մեթոդով և միայն փոսորակներում հիմքերի տեղադրման վայրերում՝ ձեռքով: Միաժամանակ սահմանվել են լրամշակման առավելագույն ծավալները: ՇՆուԿ 3.02.01-87-ում լրամշակման առավելագույն ծավալների և մեթոդների մասին ոչինչ չի սահմանվում: Սահմանվում է, որ բնահողերի հանույթներում բնահողի մշակումը թույլատրվում է իրականացնել երկփուլ՝ սևագործ և վերջնական՝ անմիջապես կոնստրուկցիայի տեղադրումից առաջ, և սահմանվել են այդ փուլերի աշխատանքների հսկողության համար հսկողական ցուցանիշների ցանկը, թույլատրելի շեղումը և հսկողության մեթոդն ու ծավալը (Կետ 3.5, 3.6, 3.29 և աղյուսակ 4):

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ոչ մի օբյեկտի համար չի կազմվել աշխատանքների կազմակերպման նախագիծ, որևէ նախագծում և տախնիկական մասնագրում նախատեսված չէ բնահողի երկփուլ մշակում, լրամշակում կամ ձեռքով լրամշակում, սակայն նախահաշիվներում, առանց որևէ հիմնավորման, հաշվարկվել են բնահողերի ձեռքով լրամշակման աշխատանքներ: **Արդյունքում, նախահաշվային արժեքները ավել են հաշվարկվել 103,891 հազար դրամով (մանրամասը տես հավելված 6):**

Առարկություն՝

Ըստ նախագծող ընկերությունների ներկայացրած պարզաբանումների

Տեխնիկական մասնագրերի առաջին գլխի “շինարարության կազմակերպման հիմնական դրույթներ” բաժնում նշված է, որ հողային աշխատանքերը իրականացվում են էքսկավատոր-ձեռքի լրամշակում սխեմայով, իսկ մեխանիզմին անհասանելի հատվածներում միայն ձեռքով: ՇՆՆԿ 3.02.01-87-ում բերված հողային աշխատանքերի նորմաները վերաբերվում են բոլոր հողային փորվածքներին՝ ինչպես փոստրակներին այնպես էլ խրամուղիներին: Ուստի ՇՆՆԿ 3.02.01-87-ի կետ 3.6 և կետ 3.7 վերաբերվում է նաև խրամուղու հողային աշխատանքներին:

ՇՆՆԿ 3.02.01-87-ի կետ 3.6-ում նշված աշխատանքների իրականացման էտապները՝ նախնական և վերջնական լիովին կիրառելի են խրամուղիների ստեղծման համար, իսկ աղյուսակ 4-ում բերված չափաբաժինները դա խրամուղու հատակի լրամշակման պարամետրներն են:

Ներքո բերվում են քաղվածքներ մի քանի տիպարային տեխնոլոգիական քարտերից, որտեղ պարզ նշվում է հողային աշխատանքերի իրականացման տեխնոլոգիան, և ինչու է պետք լրամշակումը՝

- *разработка грунта в траншее экскаваторами, оборудованными обратной лопатой, открытым способом с отсыпкой грунта в отвал или погрузкой в автотранспортные средства;*
 - *доработка грунта и зачистка откосов и дна траншеи средствами малой механизации либо вручную;*
 - *рытье приемков под соединения труб;*
- *Экскаваторы отрывают котлованы и траншеи на глубину, несколько меньшую проектной, оставляя так называемый недобор. Недобор оставляют, чтобы избежать повреждения основания и не допускать переборов грунта. (խորը չի վերաբերվում ժայռային բնահողերին);*
- *Доработка недобора грунта до проектной отметки производится средствами малой механизации с сохранением природного сложения грунтов основания либо вручную(մեր դեպքում կիրառվում է ձեռքի աշխատանք խրամուղու հատակի լայնքի նեղ պայմաններից էլնելով $b=0.5-0.7$ մ). Толщина слоя недобора зависит от применяемого типа экскаватора (արվում է հղում ՇՆՆԿ 3.02.01-87-ի աղյուսակ 4-ին, որտեղ նշված է - հակառակ շերտի էքսկավատորի համար մինչև 15սմ). При разработке траншеи одноковшовыми экскаваторами для того, чтобы не нарушить целостность и прочность грунта у основания, на которое будет опираться трубопровод, обычно оставляют некоторое количество грунта (недобор), величина которого зависит от вида экскаватора*

Հարկ է նշել, որ համաձայն ՇՆՆԿ 3.02.01-87-ի կետ 3.4-ի և աղյուսակ 3-ի պետք է հաշվարկվեն նաև գետնախարիսիների (прямки) հողային ծավալները խողովակաշարերի կցվածքների համար նախագծային ծավալից դուրս:

Խրամուղիների և փոստրակների հատակների և շեպերի լրամշակումը ձեռքով իրականացվել է համաձայն գործող ՇՆՆԿ 3.02.01-87 –ի կետ 3.6, 3.7 և աղյուսակ 4-ի սվյալների հիման վրա, որտեղ տրվում է լրամշակում ներառյալ մինչև 15սմ հատուրթամբ, ուստի աշխատանքների արժեքների հաշվարկը կատարվել է առանց նորմերի խախտումների:

Հարկ է նշել, որ լրամշակման ծավալը հաշվարկվել է միայն խրամուղու և փոստրակների հատակի նկատմամբ, համաձայն նորմատիվային սվյալների: Շեպերի լրամշակման ծավալը չի հաշվարկվել:

Ժայռային բնահողերի փիրեցումից և մշակումից հետո իրականացվում է խրամուղու, փոստրակի հատակի գերստացվածքի (переборы) մաքրում և հետլիցք տոփանումով համաձայն ՇՆՆԿ 3.02.01-87 –ի կետ 3.8 և աղյուսակ 4-ի կետ 2-ի և աղյուսակ 5-ի պահանջների հիման վրա:

ՇՆՆԿ 3.02.01-87

Выемки в грунтах, кроме валунных, скальных и указанных в п. 3.5, следует разрабатывать, как правило, до проектной отметки с сохранением природного сложения грунтов основания. Допускается разработка выемок в два этапа: черновая — с отклонениями, приведенными в поз. 1—4 табл. 4 и окончательная (непосредственно перед возведением конструкции) — с отклонениями, приведенными в поз. 5 той же таблицы.

3.7. Доработку недоборов до проектной отметки следует производить с сохранением природного сложения грунтов оснований.

3.8. Восполнение переборов в местах устройства фундаментов и укладки трубопроводов должно быть выполнено местным грунтом с уплотнением до плотности грунта естественного сложения основания или малосжимаемым грунтом (модуль деформации не менее 20 МПа). В просадочных грунтах II типа не допускается применение дренирующего грунта.

3.29. При производстве работ по разработке выемок и устройству естественных оснований состав контролируемых показателей, допустимые отклонения, объем и методы контроля должны соответствовать табл. 4.

Таблица 4

Технические требования	Предельные отклонения	Контроль (метод и объем)
1. Отклонения отметок dna выемок от проектных (кроме выемок в валунных, скальных и вечномёрзлых грунтах) при черновой		Измерительный, точки измерений устанавливаются случайным образом; число измерений на принимаемый участок

разработке:		должно быть не менее:
а) одноковшовыми экскаваторами, оснащенными ковшами с зубьями	Для экскаваторов с механическим приводом по видам рабочего оборудования:	20
	драглайн + 25 см	
	прямого копания +10 см	15
	обратная лопата +15 см	10
2. Отклонения отметок дна выемок от проектных при черновой разработке в скальных и вечномёрзлых грунтах, кроме планировочных выемок:		Измерительный, при числе измерений на сдаваемый участок не менее 20 в наиболее высоких местах, установленных визуальным осмотром
а) недоборы	Не допускаются	
б) переборы	По табл. 5	
3. То же планировочных выемок:		То же
а) недоборы	10 см	
б) переборы	20 см	
4. То же без рыхления валунных и глыбовых грунтов:		»
а) недоборы	Не допускаются	
б) переборы	Не более величины максимального диаметра валунов (глыб), содержащихся в грунте в количестве свыше 15% по объему, но не более 0,4 м	

Таблица 5

Допустимые величины переборов,

Разновидность грунта в соответствии с ГОСТ 25100-82 и модулем трещиноватости	см, при рыхлении способом		
	взрывным		механическим
	методом скважинных зарядов	методом шпуровых зарядов	
Прочные и очень прочные при модуле трещиноватости менее 1,0	20	10	5
Прочие скальные грунты, вечномёрзлые грунты	40	20	10

Այսինքն, հաշվարկը հիմնավորված է, կատարվել է համաձայն գործող նորմերի, առանց խախտումների:

• Որոշ դեպքերում սխալ են ընդունվել Փ630մմ տրամագծով մետաղական կիսախողովակների մոնտաժման աշխատանքների նորմատիվային ծախսերը՝ Ե22-72 հիմնավորմամբ ծախսերի փոխարեն ընդունվել են Ե 22-75 հիմնավորմամբ նորմատիվային ծախսերը: Սխալ են հաշվարկել կիսախողովակի ներկման աշխատանքների ծավալները: Միաձույլ բետոնե եզրաշերտի կառուցման Ե6-90 հիմքով նախատեսված նորմատիվային ծախսերի փոխարեն ընդունել են Ե6-13 հիմքով սահմանված (բետոնե հիմք-հենարաններ) նորմատիվային ծախսերը: Խմոցների միաձույլ բետոնե հենարանների նյութերի գների հաշվարկներում բետոնի փոխարեն ընդունվել են հիդրոբետոնի գները: Փխրուն բնահողի ձեռքով մշակման աշխատանքը հաշվարկվել է որպես ժայռային գրունտ: Մետաղական ցանկապատի ներկման աշխատանքների մակերեսների հաշվարկում չեն կիրառվել ցանկապատի տեսակից կախված նորմերով նախատեսված գործակիցները: Քարի չոր սալարկման աշխատանքների նախահաշվային արժեքներում կիրառվել են նախագծով նշված հաստությունից մեծ հաստությունով սալարկման աշխատանքների նորմեր: **Նշվածների արդյունքում թվով 38 օբյեկտների նախահաշվային արժեքներն ավել են հաշվարկվել 35,564 հազար դրամով:(մանրամասը տես հավելված 7):**

Առարկություն՝

Ըստ նախագծող ընկերությունների ներկայացրած պարզաբանումների Փ630մմ պողպատե կիսախողովակների մոնտաժման համար կիրառվել է Փ600մմ պողպատե խողովակների նախահաշվային նորմատիվը, հաշվի առնելով Փ630մմ պողպատե կիսախողովակի

գաբարիտները և այդ գաբարիտների համար մեքենա մեխանիզմների աշխատանքը՝ Փ630մմ պողպատե խողովակների կամ Փ630մմ կիսախողովակների տեղափոխումը շինհրապարակ, ավտոկռունկով կիսախողովակների առասանումը և դրա համար օգտագործվող սարքերը և այլ ուղեկցող աշխատանքները:

Այդ իսկ պատճառով, առաջարկվող Փ350մմ պողպատե խողովակների նորմատիվային տվյալների կիրառումը Փ630մմ պողպատե կիսախողովակների համար ընդունելի չէ:

Խմոցների պողպատե կիսախողովակների մոնտաժման արժեքում ներառված են տեխնոլոգիական բոլոր պրոցեսները, ինչ որ տրված է խողովակների համար - եռակցում, կռունկի աշխատանք և այլն, ուստի նվազեցնող գործակից չի կիրառվել:

Խմոցների 17 սմ հաստ. սալարկման գնահաշվարկում նյութաձախսը հաշվարկվել է 17սմ –ի համար, իսկ աշխատավարձի և մեքենաշահագործման գործամիավորները տրվել են 25սմ-ի համար – վրիպում է: Տվյալ վրիպումը գրանցվել է միայն 2016թ. Յիստ օբյեկտներում: Խմոցների միաձույլ բետոնե հենարանների նյութաձախսի արժեքում կիրառվել է ոչ հիդրոտեխնիկական այլ ծանր սովորական բետոնի արժեք: Միայն 1-2 նախահաշիվներում հենարանների նյութերի գների հաշվարկներում բետոնի փոխարեն ընդունվել են հիդրոբետոնի գները:

Խմոցի բետոնե եզրապատերը դիտարկվել են որպես հենապուներ, հենապատեր խմոցի սալարկման համար, ուստի կիրառվել է տվյալ դրույքը:

- Հաշվեքննությանը չներկայացվեցին տեխնիկական մասնագրերում (բացի ՀԳՇՆ ՍՊԸ-ի կողմից կազմված նախագծերում) նշված ինժեներա-երկրաբանական տվյալների համար հիմք հանդիսացած պահուստային նյութերը և հետախուզական աշխատանքների՝ լեռնային փորվածքների և դաշտային հետազոտությունների սկզբնական արդյունքներն՝ ըստ փորվածքների, տեղամասերի, ուղեգծերի և կոորդինատների: Չներկայացվեցին նաև Ինժեների ղեկավարությամբ իրավասու անձնակազմի կողմից իրականացված ինժեներա-երկրաբանական հետազոտությունների արդյունքները:

Առարկություն՝

Ստուգման ընթացքում նախագծող կազմակերպության (Անուշիկ ջրեր) երկրաբանը պարտաստանություն է հայտնել տրամադրել բոլոր պահանջվող ինժեներա-երկրաբանական տվյալները, պահուստային նյութերը՝ համապատասխան պարզաբանումներով, սակայն Ստուգումն իրականացնողի կողմից դրանք չեն պահաջվել:

Ստորև ներկայացված 4 օբյեկտների ջրատարների ծրագծերի երկրաբանական շերտերի վերաբերյալ տվյալները ճիշտ չեն ընկալվել ստուգող մասնագետների կողմից: Այն ինչ ներկայացրել են որպես ջրատարի ծրագծի երկրաբանական շերտերի հզորություններ ստուգող մասնագետների կողմից դա իրականում այդ տարածաշրջանում հանդիպող տվյալ գրունտների ընդհանուր նկարագրությունն է և այդպես ներկայացվում է այդ գրունտների միջին հզորությունները (որը ջրատարի տվյալ հատվածում կարող է ենթարկվել փոփոխության): Տարածաշրջանային ընդհանուր երկրաբանությունը որպես կանոն տեղադրված է մեր նախագծերում յուրաքանչյուր կառույցի գծագրական մասում, այդ թվում ջրատարների երկայնական կտրվածքների աջ անկյունում:

Ի դեպ օրինակ Ապարանում ներկայացված 6 շերտերից 5-ի ընդհանուր երկրաբանական նկարագրությունում ներկայացված է, որ հզորությունը մեծ է 3մ-ից, հարց է առաջանում ստուգող մասնագետները ինչ սկզբունքով են կատարել խրամուղիներում մշակման աշխատանքներում գրունտների տեսակների հաշվարկները:

Իսկ ջրատարի նշակեպային երկրաբանությունը ներկայացված է տեխնիկական մասնագրերում և ջրատարների երկայնական կտրվածքների առաջին տողում, և այդ ներկայացված երկրաբանական տվյալներով էլ կատարվել է խրամուղու ծավալների հաշվարկը: Հետևաբար ստորև բերված 4 օբյեկտների խրամուղիների ծավալների հաշվարկման մեթոդիկան ճիշտ չի իրականացված և նախագծերում ներկայացված ծավալները համապատասխանում են իրականությանը:

Ընդհանրապես ջրատարների խրամուղիների մշակման ծավալների հաշվարկման ժամանակ օգտագործում են ջրատարի առանձին հատվածների երկրաբանական կտրվածքների տվյալները (այն ներկայացված է աշխատանքային գծագրերում՝ երկայնական կտրվածքների յուրաքանչյուր հատվածի համար ըստ նշակեպերի):

Խրամուղիների մշակման ծավալների հաշվարկման համար օգտագործել փարածաշրջանային երկրաբանական փվյալները կիրառելի չէ և սխալ է:

Սակայն ինչ սկզբունքով է հաշվարկվել վերը ներկայացված ծավալները անհասկանալի է: Այլ կերպ ասած խրամուղիների հաշվարկման մեթոդիկան ճիշտ չի ընտրված ստուգող մասնագետների կողմից:

Համայնքների ջրարբիացման համակարգերի կառուցման նախագծերի տեխնիկական առաջադրանքի մեջ պատվիրատուն երկրաբանական հետազոննական աշխատանքներ կատարելու պահանջ չի դրել:

Ըստ <<Անուշիկ Ջրեր>> ՍՊԸ-ի բնահողերի մշակման կարգերը որոշելու համար մասնագետների կողմից ջրագծերի ընթացագծերի ամբողջ երկարությամբ կատարվել են տեսողական ուսումնասիրություններ, որի ժամանակ օգտվել են նաև քառասուն փարուց ավել իրենց աշխատանքային գործունեության փորձի առկայությունից և այդ փարիների ընթացքում կազմակերպության կողմից հավաքված արխիվային նյութերից:

Ժայռային (հրաբխածին, ինտրուզիվ) և կիսաժայռային (նստվածքային շերտախումբ) ապարների մշակման խմբերի (կարգերի) որոշման նպատակով մասնագետների կողմից դաշտային պայմաններում ուսումնասիրվել են բնական մերկացումները: Ակնադիտական ուսումնասիրության միջոցով ճշտվել է ինչպես ապարի ծագումնաբանությունն ու անունը, այնպես էլ գնահատվել է վերջիններիս հողմնահարվածության աստիճանը (ժայռայինի դեպքում), կամ էլ շաղկապող ցեմենտի տեսակը (նստվածքայինի դեպքում): Ունենալով ապարի անունը և ամրության աստիճանը (հողմնահարվածության աստիճան կամ ցեմենտի տեսակ) ՍՆԻՊ IV-2-82- ի համապատասխան կետով տրվել է ապարի մշակման խումբը:

Կավային (կավեր, ավազակավեր, կավավազներ), ավազային և փխրաբեկոր (գլաքար, ճալաքար, խճաքար, խիճ, կոպիճ և այլն) բնահողերի մշակման խմբերը (կարգերը) դաշտային պայմաններում որոշվել են բնահողի մեջ ոչ մեծ չափերի (օրինակ՝ 50x50x50սմ) փոսիկներ (զումպֆ) փորելու միջոցով: Այս փոսիկից հանված բնահողը ամբողջությամբ հավաքվել է և կշռվել: Չափվել է նաև կոնկրետ փոսիկի ծավալը: Եթե փոսիկը կանոնավոր չափերի է եղել, ապա ծավալը հաշվվել է անալիտիկ եղանակով:

Իսկ եթե փոսիկը անկանոն ձևի է եղել (տձև, ապա վերջինիս մեջ տեղադրվել է ավելի մեծ չափերի պոլիէթիլենային փոպրակ (թաղանթ) և այն լցվել է ջրով: Փոսիկից հանված բնահողի զանգվածը բաժանելով փոսիկի մեջ տեղավորված ջրի ծավալի վրա, ստացել ենք տվյալ բնահողի ծավալային կշիռը: Ծավալային կշռի հիման վրա էլ ըստ ՄՆԻՊ-ի տվել ենք տվյալ բնահողի մշակման խումբը (կարգը): Բնահողերի մշակման խմբերը (կարգերը) որոշվել են նաև փորվածքներից հանված նյութի հատիկաչափական կազմի (մասնիկների մեծության) հիման վրա, որը որպես ծավալային կշռին լրացնող չափորոշիչ կիրառվել է հատկապես ՄՆԻՊ-ի 5, 6 և 10 կետերում ընդգրկված բնահողերի դեպքում:

Մեր կողմից ընտրանքային կարգով ուսումնասիրվել են նախագծերում նշված ինժեներա-երկրաբանական տվյալները և ջրագծերի հողային աշխատանքների ծավալները ինչից պարզվել է, որ

Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքի արտավայրերի ջրարբիացման համակարգի Ջրատարի հողի մշակման ծավալը նախագծի երկայնական պրոֆիլում նշված նիշերով հեռավորություններով շեպերով և շերտերի հզորություններով հաշվարկի դեպքում կազմում է 8,785 խմ, այնինչ նախագծում և կատարողական ակտերում ցույց է տրվել 9,270 խմ կամ ավել 485 խմ-ով, որի համար ավել վճարված կատարողականի գումարը կազմում է 1,591 հազար դրամ, իսկ ավել հաշվարկված նախահաշվային արժեքը՝ 1,635 հազար դրամ:

Առարկություն՝

Մեր կողմից կատարվել է Արտաշավան համայնքների ջրատարների խրամուղու մշակման ծավալների վերահաշվարկ (հավելված-1): Ծավալների շեղումներ չկան:

✓

Նախագծի տեխնիկական մասնագրի ինժեներա-երկրաբանական պայմաններում N1 շերտի հզորությունը արձանագրվել է 0.1մ-0.2մ, N2 շերտինը՝ 0.6մ-1մ, N3 շերտինը՝ 0.5մ-0.6մ, N4-ինը՝ 1.5մ-2մ, և N5 շերտինը՝ 1մ-2մ, այնինչ նախագծի երկայնական պրոֆիլում և մասնագրի պիկետային նկարագրություններում շերտերի հզորությունները, առանց որևէ հիմնավորման, պակաս են ցույց տրվել վերը նշվածից, ինչի արդյունքում, էականորեն տարբեր են ստացվել ըստ մշակման բարդության կարգերի բնահողերի ծավալները: Մասնավորապես, 4-րդ կարգի բնահողի ծավալը նախագծում և կատարողականներում հաշվարկված 1,356 խմ-ի փոխարեն կազմում է 1,278 խմ, 5-րդ կարգինը՝ 5,007 խմ-ի փոխարեն՝ 7,444 խմ, և 7-րդ կարգինը՝ 2,907 խմ-ի փոխարեն 63 խմ: **Նշվածի**

արդյունքում կատարողական ակտերով ավել հաշվարկված գումարը կազմում է 7,535 հազար դրամ, իսկ ավել հաշվարկված նախահաշվային արժեքը 42,327 հազար դրամ:

✓ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքի արոտավայրերում ջրարբիացման համակարգի նախագծի տեխնիկական մասնագրի ինժեներա-երկրաբանական պայմաններում N1 շերտի հզորությունը արձանագրվել է մեծ 2.5 մ-ից, N2 շերտինը՝ մեծ 3 մ-ից, N3 շերտինը՝ մեծ 3 մ-ից, և N4 շերտինը՝ մեծ 4 մ-ից, այնինչ նախագծի երկայնական պրոֆիլում և մասնագրի պիկետային նկարագրություններում շերտերի հզորությունները, առանց որևէ հիմնավորման, պակաս են ցույց տրվել վերը նշվածից, ինչի արդյունքում էականորեն տարբեր են ստացվել ըստ մշակման բարդության կարգերի բնահողերի ծավալները: Մասնավորապես, 4-րդ կարգի բնահողի ծավալը նախագծում և կատարողականներում հաշվարկված 5,332 խմ-ի փոխարեն կազմում է 6,987 խմ, 5-րդ կարգինը՝ 7,867 խմ-ի փոխարեն՝ 6,732 խմ, և 6-րդ կարգինը՝ 3,367 խմ-ի փոխարեն 2,736 խմ:

Նշվածի արդյունքում կատարողական ակտերով ավել հաշվարկված գումարը կազմում է 2,642 հազար դրամ, իսկ նախահաշվային արժեքը ավել է հաշվարկվել 5,297 հազար դրամով:

✓ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի արոտավայրերում ջրարբիացման ցանցի Ջրատարի հողի մշակման ծավալը նախագծի երկայնական պրոֆիլում նշված նիշերով հեռավորություններով շեպերով և շերտերի հզորություններով հաշվարկի դեպքում կազմում է 9,894 խմ, այնինչ նախագծում և կատարողական ակտերում ցույց է տրվել 9,460 խմ կամ պակաս 434 խմ-ով:

Նախագծի տեխնիկական մասնագրի ինժեներա-երկրաբանական պայմաններում N1 շերտի հզորությունը արձանագրվել է մեծ 2.5 մ-ից, N2 շերտինը՝ մեծ 3 մ-ից, N3 շերտինը՝ մեծ 3 մ-ից, և N4 շերտինը՝ մեծ 5 մ-ից, այնինչ նախագծի երկայնական պրոֆիլում և մասնագրի պիկետային նկարագրություններում շերտերի հզորությունները, առանց որևէ հիմնավորման, պակաս են ցույց տրվել վերը նշվածից, ինչի արդյունքում, էականորեն տարբեր են ստացվել ըստ մշակման բարդության կարգերի բնահողերի ծավալները: Մասնավորապես, 3-րդ և 4-րդ կարգի բնահողի ծավալը նախագծում և կատարողականներում հաշվարկված 4,863 խմ-ի փոխարեն կազմում է 6,722 խմ, 5-րդ կարգինը՝ 3,974 խմ-ի փոխարեն 2,520 խմ, 6-րդ և 7-րդ կարգինը՝ 6,213 խմ-ի փոխարեն 303 խմ: **Նշվածի արդյունքում կատարողական ակտերով ավել հաշվարկված գումարը կազմում է 1,533 հազար դրամ, իսկ նախահաշվային արեքը ավել է հաշվարկվել 2,261 հազար դրամով:**

✓ CARMAC2-CP-16-A-6/02 (Aparan CW) ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի խրամուղում հողի մշակման ծավալը նախագծի երկայնական պրոֆիլում նշված նիշերով հեռավորություններով շեպերով և շերտերի հզորություններով հաշվարկի դեպքում կազմում է 6,060 խմ, այնինչ նախագծում և կատարողական ակտերում ցույց է տրվել 5,637 խմ կամ պակաս 423 խմ-ով:

Նախագծի տեխնիկական մասնագրի ինժեներա-երկրաբանական պայմաններում N1 շերտի հզորությունը արձանագրվել է մեծ 3 մ-ից, N2 շերտինը՝ մեծ 3 մ-ից, N3 շերտինը՝ մեծ 3 մ-ից, N4 շերտինը՝ մեծ 3 մ-ից, N5 շերտինը՝ մեծ 3 մ-ից, և 6-րդ շերտինը՝ մեծ 5 մ-ից, այնինչ նախագծի երկայնական պրոֆիլում և մասնագրի պիկետային նկարագրություններում շերտերի հզորությունները, առանց որևէ հիմնավորման, պակաս են ցույց տրվել վերը նշվածից, ինչի արդյունքում, էականորեն տարբեր են ստացվել ըստ մշակման բարդության կարգերի բնահողերի ծավալները: Մասնավորապես, կտրման աշխատանքներում 4-րդ կարգի բնահողի ծավալը նախագծում և կատարողականներում հաշվարկված 365 խմ-ի փոխարեն կազմում է 817 խմ, 5-րդ կարգինը՝ 1,790 խմ-ի փոխարեն 1,721 խմ, 6-րդ կարգինը՝ 725 խմ-ի փոխարեն 337 խմ: Խրամուղու փորման աշխատանքներում 4-րդ կարգի բնահողի ծավալը նախագծում և կատարողականներում հաշվարկված 459 խմ-ի փոխարեն կազմում է 1,556 խմ, 5-րդ կարգինը՝ 2,553 խմ-ի փոխարեն 3,726 խմ, 6-րդ կարգինը՝ 2,524 խմ-ի փոխարեն 750 խմ, և 7-րդ կարգինը՝ 102 խմ-ի փոխարեն 27 խմ: Տարբերություններ են արձանագրվել նաև ավազի նախապատրաստական շերտի, բնահողի հետլիցքի և ավելորդ բնահողի հարթեցման աշխատանքների ծավալներում:

Նշվածների արդյունքում կատարողական ակտերով ավել է հաշվարկվել 12,699 հազար դրամ, իսկ նախահաշվային արժեքը ավել է հաշվարկվել 17,165 հազար դրամով:

Առարկություն՝

Մեր կողմից կատարվել է Ապարան համայնքների ջրատարների խրամուղու մշակման ծավալների վերահաշվարկ (հավելված-2): Ծավալների շեղումներ չկան:

✓ CARMAC2-CP-17-A-6/02-1 (APARAN-2 CW) ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի Խրամուղում հողի մշակման ծավալը նախագծի երկայնական պրոֆիլում նշված նիշերով հեռավորություններով շեպերով և շերտերի հզորություններով հաշվարկի դեպքում կազմում է 7,407 խմ, այնինչ նախագծում և կատարողական ակտերում ցույց է տրվել 7,859 խմ կամ ավել 452 խմ-ով: Հարթակի կտրման աշխատանքներում բնահողի ծավալը կազմում է 7,615 խմ, այնինչ կատարողական ակտերով հաշվարկվել է 7,863 խմ կամ ավել 248 խմ-ով:

Նախագծի տեխնիկական մասնագրի ինժեներա-երկրաբանական պայմաններում N1 շերտի հզորությունը արձանագրվել է մեծ 3 մ-ից, N2 շերտինը՝ մեծ 3 մ-ից, N3 շերտինը՝ մեծ 3 մ-ից, N4

շերտինը՝ մեծ 3 մ-ից, N5 շերտինը՝ մեծ 3 մ-ից, և 6-րդ շերտինը՝ մեծ 5 մ-ից, այնինչ նախագծի երկայնական պրոֆիլում և մասնագրի պիկետային նկարագրություններում շերտերի հզորությունները, առանց որևէ հիմնավորման, պակաս են ցույց տրվել վերը նշվածից, ինչի արդյունքում էականորեն տարբեր են ստացվել ըստ մշակման բարդության կարգերի բնահողերի ծավալները: Մասնավորապես, կտրման աշխատանքներում 4-րդ կարգի բնահողի ծավալը նախագծում և կատարողականներում հաշվարկված 533 խմ-ի փոխարեն կազմում է 1,061 խմ, 5-րդ կարգինը՝ 4,738 խմ-ի փոխարեն 4,934 խմ, 6-րդ կարգինը՝ 2,451 խմ-ի փոխարեն 1,505 խմ, և 7-րդ կարգինը՝ 141 խմ-ի փոխարեն 115 խմ: Խրամուղու փորման աշխատանքներում 4-րդ կարգի բնահողի ծավալը նախագծում և կատարողականներում հաշվարկված 735 խմ-ի փոխարեն կազմում է 1,651 խմ, 5-րդ կարգինը՝ 4,668 խմ-ի փոխարեն 4,058 խմ, 6-րդ կարգինը՝ 2,306 խմ-ի փոխարեն 1,580 խմ, և 7-րդ կարգինը՝ 150 խմ-ի փոխարեն 118 խմ: Տարբերություններ են արձանագրվել նաև ավազի նախապատրաստական շերտի, բնահողի հետլիցքի և ավելորդ բնահողի հարթեցման աշխատանքների ծավալներում: **Նշվածների արդյունքում պայմանագրով ավել հաշվարկված գումարը կազմում է 8,918 հազար դրամ, իսկ նախահաշվային արժեքը ավել է հաշվարկվել 7,473 հազ, դրամով:**

- CARMAC 2-CP-18-L-7/02 (Jrashen CW) ՀՀ Լոռու մարզի Ջրաշեն համայնքի արոտավայրերում ջրարբիացման համակարգի կառուցում օբյեկտի նախագծում չկան փարախի կառուցման աշխատանքների համար ցույց տրված 1,200 խմ 3-րդ կարգի և 1,120 խմ 4-րդ կարգի գրունտի բուլդոզերով 50մ տեղափոխման ծավալները հիմնավորող որևէ գծագիր, հաշվարկ, բացատրական: Նախագծված է 1,000 քմ (50մ*20մ) հարթակի պատրաստման աշխատանքներ: Համաձայն հորիզոնականների բնահողի կտրման և լիրքի աշխատանքներ պետք է իրականացվել 20 մ երկարությամբ կողի վրա՝ կատարելով կտրում 10 մ և լիրք՝ 10 մ: Համաձայն ՇՆուԿ IV,2,82 Մաս IV Գլուխ 2 Հատոր 1-ի Հավաքածու 1-ի 2,10 կետի բուլդոզերով գրունտի տեղափոխման հեռավորությունը պետք է հաշվարկվի իցքի և հանույթի ծանրության կենտրոնների հեռավորության չափ, ինչը տվյալ դեպքում կամում է 10մ, այնինչ ծավալաթերթում և կատարողական ակտերում այն հաշվարկվել է 50 մ կամ ավել 40 մ-ով: Նշված աշխատանքների նախահաշվային արժեքների տարբերությունները 3-րդ կարգի բնահողի դեպքում կազմում է 76.9%, իսկ 4-րդի դեպքում՝ 5 %: Հետևաբար, կատարված աշխատանքների համար, նախահաշվային արժեքների համամասնությամբ, պետք է վճարվեր 660 հազար դրամ $(1,200\text{խմ} * 0.428917 * 0.231 + 1120\text{խմ} * 0.4827 * 1.11603 * 0.345) * 1.2$, սակայն վճարվել է 2,117 հազար դրամ կամ **ավել 1,456 հազար դրամով:**

Առարկություն՝

Ջրաշեն օբյեկտի փարախի հարթակի պատրաստման ժամանակ գրունտի կտրումը և տեղափոխումը իրականացվել է փարախի երկայնքով: Գրունտի տեղափոխումը կատարվել է 50մ-ից ավելի հեռավորությունների վրա, որը հստակ երևում է տեղում: Իսկ հարթակի լրացուցիչ հարթեցումը իրականացվել է և երկայնական, և լայնական ուղղություններով:

Վերը նշված

- նախագծային ծավալների սխալ հաշվարկման արդյունքում պայմանագրերով և կատարողական ակտերով ավել են հաշվարկվել 36,374 հազար դրամ:

- նախահաշվային արժեքների սխալ հաշվարկման արդյունքում 3,477,001 հազար դրամ ընդհանուր նախահաշվային արժեքով թվով 58 նախահաշիվներում ավել է հաշվարկվել 376,406 հազար դրամ: Առանձին դեպքերում ավել հաշվարկված նախահաշվային արժեքը կազմում է օբյեկտի նախահաշվային արժեքի 59%-ը (մանրամասը տես հավելված 8):

Առարկություն՝

Հավելված 8-ում նշված խախտման տեսակներին մեր կողմից առանձին-առանձին վերը նշվածում տրվել են պարզաբանումներ և առարկություններ, բացի «այլ խախտումներ» սյունակից: Ստուգումն իրականացնողների կողմից արձանագրված այլ խախտումների հավաստիությունը ճշտելու նպատակով, պատահականության սկզբունքով ուսումնասիրվել է ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի ջրարբիացման համակարգի կառուցման նախահաշվի կատարված «ճշտումները»: Նախահաշվով տրված է խմոցների սալարկումը իրականացնել 22սմ հաստությամբ ուղիղ կտրվածքի փուֆ քարով, որի 1մ³ արժեքը ընդունված է 6,67 հազ.դրամ (ինչը համապատասխանում է տեղեկագրին): Ստուգումն իրականացնողների կողմից կատարվել է վերահաշվարկ և ընդունվել է քարի 1մ³ արժեքը 3,17 հազ.դրամ, որը համապատասխանում է ճեղքված բազալտի արժեքին: Արդյունքում 2108,64 հազ. դրամը համարվել է ավել հաշվարկված խախտում, որը անհասկանալի է և անընդունելի: Այսինքն, «այլ խախտումներ» սյունակը եթակա է վերանայման:

Ճշտված նախահաշվային արժեքների և շինարարական աշխատանքների պայմանագրային գների համադրումից պարզվել է, որ **1,984,729 հազար դրամ ընդհանուր պայմանագրային գնով թվով 35 օբյեկտների պայմանագրային գները գերազանցում են ճշտված նախահաշվային արժեքները 263,832 հազար դրամով: Առանձին դեպքով պայմանագրային գինը գերազանցում է ճշտված նախահաշվային արժեքը 48 %-ով (մանրամասը տես հավելված 9):**

2. Պայմանագրային պարտավորությունների և աշխատանքների կատարման և որակի հաստատման գործառույթներ

Համաձայն պայմանագրերի և նախագծերի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական մասնագրերի կապալառուն պատվիրատուին պետք է հանձնել

1) պայմանագիրը կնքելուց 7 օրվա ընթացքում աշխատանքների կատարման ընդհանուր մեթոդները և ավարտման ժամանակացույցերը:

2) կատարողական գծագրեր, որոնց վրա պետք է պարզ նշված լինեին տեղադրությունները, խորությունները, թեքությունները, բարձրությունները, բոլոր հիմնական կառուցվածքների ձևերն ու չափերը, այնպես, ինչպես դրանք իրականացվել են:

3) Աշխատանքների կատարումը և որակը հավաստելու համար

✓ տեղամասի երկայնական պրոֆիլը աշխատանքների կատարումից առաջ և հետո, լայնակի կտրվածքները 25 մ չգերազանցող ինտերվալներում՝ աշխատանքների կատարումից առաջ և հետո, վկայակոչել հողային փորվածքի նախագծային մակարդակը: Լայնակի կտրվածքները պետք է ընդգրկեին այն լայնությունը, որ անհրաժեշտ է եղել շինարարական և գրունտային աշխատանքների համար:

✓ Բոլոր դաշտային մատյանները, հաշվարկները, քարտեզները և այլ գեոդեզիական նյութերը պետք է հանձնվեին ինժեներին այդ աշխատանքների ավարտից հետո:

✓ Բոլոր տվյալները, որոնք ստացվել էին գեոդեզիական աշխատանքներից, պետք է մտցվեին դաշտային մատյանների մեջ և հանձնվեին ինժեներին:

✓ Լուսանկարչական ալբոմներ՝ աշխատանքների ընթացքի, ավարտված աշխատանքների ռետուշավորված լուսանկարների օրինակներով և նեգատիվներով՝ թվագրված և վերնագրված:

4) Կանոնավոր ամսական հաշվետվություններ, որտեղ պետք է նշված լինեին՝

- ✓ նախորդ ամսվա կատարված աշխատանքները և աշխատանքները, որոնք սկսվում են ընթացիկ ամսում
- ✓ օրացուցային պլանի կատարումը
- ✓ ամսեկան հաշվարկային ծախսերը
- ✓ սարքավորումների և նյութերի գույքագրման ցուցակը
- ✓ հաշվետու ամսվա ընթացքում և ամբողջ շինարարության սկզբից ձեռք բերված նյութերի հաշվետվությունը

Նշված պահանջներից և ոչ մեկը չի իրականացվել: Ստուգմանը ներկայացվեցին ընդամենը յուրաքանչյուր օբյեկտում մեկ կամ առավելագույնը երկու օրերում կատարված մի քանի չոետուշավորված, չթվագրված և չվերնագրված թվային լուսանկարներ, որոնք չեն արտացոլում շինարարության ընթացքը և ավարտը:

Աշխատանքների ավարտների ժամկետները 40 պայմանագրերի դեպքում երկարացվել են:

Առարկություն՝

Կատարողական գծագրեր պահանջվել են այն դեպքում, երբ շինարարության ընթացքում կատարվել են ջրափարների ծրագծի փոփոխություն: Հիմնականում բոլոր ծրագծերի շինարարական աշխատանքները կատարվել են ըստ նախագծի:

Ստուգումն իրականացնողին տրամադրվել են շինարարության ընթացքի տարբեր փուլերում (բայց ոչ 1-2 օրում) կատարված լուսանկարների էլեկտրոնային ալբոմները: Լուսանկարների ռեփուշավորման անհրաժեշտություն չկա:

Ինչ վերաբերվում է պայմանագրերի ավարտների ժամկետների երկարացմանը, ապա անհասկանալի է թե ստուգումն իրականացնողը ինչ իմաստով է նշել այդ փաստը: Հարկ է նշել, որ բոլոր երկարացումները պատշաճ հիմնավորված են և մեծապես հիմնված են եղանակային պայմանների վրա:

3 Պայմանագրով պատվիրված աշխատանքների տեսակների և ծավալների փոփոխություններ

- Աշխատանքների իրականացման ընթացքում կապալառուների և համայնքի ղեկավարների առաջարկությունների հիման վրա թվով 31 պայմանագրերի շրջանակներում կատարվել են աշխատանքների տեսակների և ծավալների փոփոխություններ: Ընդհանուր առմամբ,

պայմանագրային միավոր գներով, պայմանագրային գները ավելացվել են 212,983 հազար դրամով և նվազեցվել են 123,569 հազար դրամով: Առանձին դեպքերով կատարվել է մինչև 27%-ի չափով պայմանագրային գնի փոփոխություն, իսկ նախահաշվային արժեքով հաշվարկի դեպքում՝ մինչև 36%-ի չափով: Մասնավորապես, CARMAC2-CW-16-4/02 (GGH CW) ՀՀ ԳՆ Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի (7-14 առանցքների) վերանորոգման աշխատանքների պայմանագրում պայմանագրային միավոր գներով ավելացվել են 25,575 հազար դրամի աշխատանքներ և նվազեցվել են 11,163 հազար դրամի աշխատանքներ:

- փոփոխությունների համարժեքության ուսումնասիրությամբ պարզվել է, որ նվազեցվող աշխատանքների պայմանագրային միավոր գները նախահաշվային արժեքներից ցածր գնահատելու, իսկ ավելացվող աշխատանքների միավորի գները նախահաշվային արժեքներից բարձր գնահատելու արդյունքում **թվով 16 պայմանագրերի շրջանակներում տեղի է ունեցել աշխատանքների թանկացում 25,550 հազար դրամի չափով՝** ավելացված աշխատանքները գնահատվել են 212,983 հազար դրամ, իսկ նվազեցված աշխատանքները՝ 123,569 հազար դրամ, այնինչ ավելացված աշխատանքների նախահաշվային արժեքը կազմել է 194,081 հազար դրամ, իսկ նվազեցվածներինը՝ 124,157 հազար դրամ (մանրամասը տես հավելված 10):

Առարկություն

Ստուգումն իրականացնողի կողմից իսկ կատարված հաշվարկների համաձայն մնացած՝ թվով 15 պայմանագրերում տեղի է ունեցել հակառակը՝ աշխատանքների էժանացում 12,010 հազար դրամի չափով, ինչը սակայն չի արձանագրվում:

Բացի այդ, Վարկային համաձայնագրով նախատեսված է, որ ՀԳՌԿՄ II ծրագրի գնումները իրականացվում են ղեկավարվելով 2011 թվականի հունվարով թվագրված և 2014թ. հուլիսին վերանայված Համաշխարհային բանկի գնումների ուղեցույցներով՝ «Ուղեցույցներ. Համաշխարհային բանկի Վարկառուների կողմից ՎՋՄԲ Վարկների ու ՄՋԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում կատարվող ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդարվական ծառայությունների գնումներ»:

Ուղեցույցներում նշված է, որ Վարկառուն պետք է օգտագործի Բանկի կողմից մշակված համապատասխան ստանդարտ մրցութային փաստաթղթերը, առանց որևէ տեքստային փոփոխության: Գնանշման հարցմամբ շինարարական աշխատանքների ձեռքբերման համար նույնպես նախատեսված է մրցութային փաստաթղթերի ձև,

ներառյալ պայմանագրի ձևը, որում և սահմանված է հետևյալ կերպը աշխատանքների ծավալների փոփոխության վերաբերյալ՝

«է) աշխատանքների ծավալների փոփոխության դեպքում, պայմանագրով սահմանված միավորի գինը կկիրառվի փոփոխման կարգը պահպանելու համար: Գլխավոր շինարարի կողմից սահմանված նոր աշխատանքների կատարման համար կվճարվի համապետ համաձայնեցված գումարը, իսկ Կապալառուի և գլխավոր շինարարի միջև ծագած անհամաձայնությունների դեպքում, վերջինս կսահմանի միավորի գինը, որը պարտադիր է Կապալառուի համար, »

CARMAC 2-CP-18-L-7/02 (Jrashen CW) ՀՀ Լոռու մարզի Ջրաշեն համայնքի արտավայրերում ջրարբիացման համակարգի կառուցման ընթացքում 06.08.2018թ.-ին հեղինակային հսկիչ <<Քվե նախագիծ>> ՍՊԸ և տեխնիկական հսկիչ <<ՀՀ նախագծերի արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի մասնակցությամբ կազմվել է բացված փոստակներում ու խրամուղիներում հիմնատակերի բնահողերի որակի ստուգման արձանագրություն, համաձայն որի խմոցների տեղամասում <<...հատակագծային նիշը կազմում է ըստ նախագծի, հատակագծային տեղադրումը համապատասխանում է գլխավոր հատակագծին, գրունտային ջրերի մակարդակը գտնվում է -1.2մ հարթեցման նիշից, հիմքերի տեղադրման խորությունը ըստ նախագծի կազմում է -1.5մ հարթեցման նիշից և փաստացի -1.5մ հարթեցման նիշից...>> և որպես հատուկ դիտողություն նշել են որ <<...անհրաժեշտ է նախատեսել ջրահեռացում (դրենաժային համակարգ...>>: Նշվածի հիման վրա կապալառու <<ՎՆՍ ՇԻՆ>> ՍՊԸ-ի տնօրենը դիմել է պատվիրատուին՝ նշելով, որ աշխատանքների ընթացքում ի հայտ են եկել ստորերկրյա ջրեր, որը հնարավորություն չի տալիս շինարարական աշխատանքները շարունակել, և խնդրել է տալ անհրաժեշտ լուծում: Պատվիրատուն 2018թ.-ի հուլիսի 18-ին նշված գրությունը ուղարկել է նախագծող <<Քվե նախագիծ>> ՍՊԸ-ին՝ առաջարկելով տալ համապատասխան նախագծային լուծում: Որպես լուծում նախագծվել են հարթեցման նիշից 1.2մ ներքև թվով 3 դրենաժների կառուցում, կատարվել է պայմանագրային գնի ավելացում 3,468 հազար դրամով, և նշված գումարն ամբողջովին վճարվել է կապալառուին: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերը նշված 06.08.2018թ.-ին կազմված արձանագրությունում նշված փաստը այն մասին, որ հիմքերի տեղադրման խորությունը ըստ նախագծի կազմում են 1.5մ հարթեցման նիշից ներքև չի համապատասխանում իրականությանը, քանի որ համաձայն նախագծի, հիմքերի տեղադրման խորությունը հարթեցման նիշից կազմում են 1.2մ (նախագիծ գիրք-2 թերթ ՃՇ-15, ՃՇ-16, ճշ-18, ՃՇ-28), հետևաբար 1.2 մ խորության վրա գտնվող ստորգետնյա ջրերը չէին կարող խանգարել

շինարարական աշխատանքների ընթացքին և կառուցվող դրենաժային համակարգը, որի կառուցման համար վճարվել է 3,468 հազար դրամ, ոչնչով չէր կարող նպաստել շինարարական աշխատանքներին և կառույցին: Բացի այդ, չնայած նրան, որ փոփոխության համար հիմք հանդիսացած կապալառուի գրությունում նշվում է միայն ստորգետնյա ջրերի հեռացման անհրաժեշտության մասին, պայմանագրի փոփոխությունում նախատեսվել և կատարողականներով վճարվել են նաև լրացուցիչ 18.4 քմ խճով բնահողի տոփանմամբ քարե չոր սալարկման նախաշերտի կառուցման աշխատանքներ՝ գումարով 123 հազար դրամի:

Առարկություն՝

Ջրաշեն համայնքի արտավայրերում ջրարբիացման համակարգի կառուցում օբյեկտի շին. աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ են եկել գրունտային ջրեր. Որոնք գտնվում էին հարթեցման մակարդակից մինչև -1.2մ խորության վրա (դա պարզ երևում է տրամադրված լուսանկարներում), ուստի նախագծված և կառուցված դրենաժային համակարգերը պարտադիր են գրունտային ջրերը հիմքերից հեռացնելու համար:

Ինչ վերաբերում է լրացուցիչ 18.4 քմ խճով բնահողի տոփանմամբ քարե չոր սալարկմանը, ապա ծավալների ստուգման արդյունքում կատարվել է ծավալների ճշգրտում:

- NCB-CARMAC2-CP-16-G-13/02 (Sarukhan CW) ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքի արտավայրերում ջրարբիացման համակարգի կառուցման ընթացքում կապալառու 17.10.2016թ.-ին դիմել է պատվիրատուին՝ նշվելով, որ ՆԿ90+40-ՆԿ90+50, ՆԿ99+80-ՆԿ112+84 և ՆԿ115+63-ՆԿ124+00, հատվածներում հողային աշխատանքներ կատարելիս, հայտնաբերվել են ժայռային գրունտներ, և խնդրել է կատարել համապատասխան ճշտումներ հողային աշխատանքների կարգերում և ծավալներում: Նշված առաջարկին նախագծող «Անուշիկ Ջրեր» ՍՊԸ-ն, 28.10.2016թ գրությամբ, պատասխանել է, որ «... բացված խրամուղու ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մեր կողմից տրված բնահողի մշակման խմբերը (կարգերը) համապատասխանում են ՇՆուԿ 4-2-82 թիվ 1 մեջ նկարագրված բնահողերի տեսքերին, սակայն կրային ցեմենտով ուժեղ շաղկապվածության պատճառով բնահողերի մշակման ժամանակ անհրաժեշտություն է առաջացել ՊԿ 102+25-ՊԿ105+25, ՊԿ 107+00-ՊԿ112+00, ՊԿ117+80-ՊԿ123+15 հատվածներում կիրառել նախնական փխրեցում և այդ հատվածում փխրեցումը կկազմի ընդհանուր ծավալի 30%-ը՝ 500խմ: Պայմանագրում կատարվել է փոփոխություն և լրացուցիչ վճարվել է 500քմ ժայռային գրունտի

փխրեցման ախատանքներ՝ 2,160 հազար դրամ, ինչը վճարման ենթակա չէր, քանի որ համաձայն նախագծողի կողմից տրված եզրակացության, բնահողի կատեգորիայի փոփոխություն տեղի չի ունեցել, իսկ նախագծում նշված տվյալ բնահողերի մշակման համար հենց նույն վերը նշված ՇՆՈւԿ-ով նախանական փխրեցման վճարում չի նախատեսվում:

Համայնքի ղեկավարը պատվիրատուին ուղղված 16.09.2016թ գրությունում նշել է, որ <<... համակարգի ջրի մատակարարումը իրականացվելու է 3 հատ աղբյուրներից, որոնց ջրերը միացման կետում նախագծով նախատեսվել է կառուցել ջրընդունիչ: Աղբյուրների ընդհանուր երկարությունը այդ կետից կազմում է շուրջ 400մ: Եթե աղբյուրների վրա կառուցվի աղբյուրակապեր և 400մ ընդհանուր երկարությամբ ջրագիծ, որը միանա նախագծի ջրագծին ՆԿ 0+00 կետում, ապա կապահովվի ջրի երաշխավորված մաքրությունը ամբողջ ջրատարի մեջ ...>> և առաջարկել է նախագծում կատարել փոփոխություն:

Կապալառուն իր հերթին 17.07.2017թ թիվ 27 գրությամբ դիմել է պատվիրատուին՝ նշվելով, որ <<... ջրընդունիչի վրա, քանի որ արդեն ունենալու ենք մաքուր խմելու ջուր, անհրաժեշտ է տեղադրել ծածկ և ջրահեռացման համակարգ ...>>:

Նշված առաջարկությունները ընդունվել են պատվիրատուի և նախագծային կազմակերպությունների կողմից, կատարվել է պայմանագրային փոփոխություն և այդ աշխատանքների համար լրացուցիչ վճարվել է 6,105.8 հազար դրամ, այնինչ <<Էմ Զի դիզայն>> ՍՊԸ-ի կողմից 18.04.2016թ.-ին տրված թիվ 03-ի քործաքննության եզրակացությամբ երաշխավորվել է, որ նախագիծային փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ-ում գործող օրենսդրությանը և նորմատիվատենիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, հետևաբար նախագծով ապահովված էր ջրի երաշխավորված մաքրությունը ամբողջ ջրատարի մեջ, և 6,106 հազար դրամի լրացուցիչ վճարված աշխատանքների կատարումը ոչնչով չի հիմնավորվում: Որևէ նորմով չի պարտադրվում ջրարբիացման համար կատարվող ջրառն իրականացնել պարտադիր փակ համակարգով, ընդ որում, նույն այս ծրագրի շրջանակներում բազմաթիվ դեպքերում նախագծվել և իրականացվել են բաց առվակներից և ոռոգման համակարգերից բաց ջրընդունիչներով ջրառներ:

Առարկություն՝

Կապալառու կազմակերպության նամակի հիման վրա կարարված դաշտային ուսումնասիրությունների արդյունքում բնահողերի մշակման խմբերը (կարգերը) չեն փոխվել, քանի որ ինչպես ծավալային կշռի, այնպես էլ հատիկաչափական կազմի առումով, որոնց հիման վրա է որոշվում բնահողերի խումբը(կարգը), նախագծային ցուցանիշների հետ շեղումներ չեն հայտնաբերվել:

Մորենային առաջացումները, որոնք դասվում են փխրաբեկոր նստվածքային առաջացումների խմբին, կրային ցեմենտով ամուր շաղկապվածության արդյունքում վերածվել են գրեթե կոնգլոմերատների, որոնք հանդիսանում են կիսաժայռային ապարներ: Վերջիններիս մշակումը համեմատած փխրաբեկոր նստվածքների հետ անհամեմատ դժվար է և առավել աշխատատար:

Բնահողերի նախնական փխրեցման տարբերակը մեր կողմից ընտրվել է նկատի ունենալով երկու հիմնական պատճառ.

- Խրամուղու փորումը էքսկավատորի միջոցով բնահողի առավել ցեմենտացված ուղեհատվածներում երբեմն դառնում էր գրեթե անհնար:

Խրամուղու նախագծային լայնությունը շար հաճախ թույլ չի տալիս հատկապես խոր հորիզոններից առանց նախնական փխրեցման կամ ջարդոտման խրամուղուց հանել խոշորակտոր բեկորանյութը մանավանդ այն դեպքերում, երբ վերջիններս իրենց երկարությամբ տեղադրված են լինում խրամուղու ծրագծին ընդլայնական:

Սարուխան համայնքի ջրարբիացման համակարգի գլխամասային հանգույցի փոփոխության հինք է հանդիսացել Պատվիրատուի և համայնքապետարանների կողմից ներկայացված նամակները: Մասնավորապես Կարմիրի և Սարուխանի համայնքապետերը նշել են, որ մաքուր ջուր են ուզում, քանի որ այդ ջրից օգտվելու են այդ համայնքների օբաների բնակիչները խմելու և կաթնամթերք պատրաստելու համար: Ուտի առաջացել է մաքուր ջրի քանակի ավելացման անհրաժեշտություն:

Ելնելով վերը նշվածից մեր կողմից ջրընդունիչ կառույցը ծածկվել է և ջուրը վերցվել է աղբյուրների ակունքներից՝ խուսափելով ջրի աղտոտումից և ապահովելով հնարավորինս մաքուր ջրի մուտք կառուցվող համակարգ:

• ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիր համայնքի արոտավայրերի ջրարփիացման ցանցի կառուցման աշխատանքների իրականացման թիվ NCB-CARMAC2-CP-16-G-14/02 պայմանագիր:

Կապալառու <ՇԻՆԱՇԽԱՐՀ> ՍՊԸ-ի տնօրենը 30.09.2016թ. թիվ Ե-61 գրությունով դիմել է պատվիրատուին՝ նշելով, որ իրենց կարծիքով ՆԿ00+70-ՆԿ5+70 և ՆԿ13+00-ՆԿ30+00 հատվածներում գրունտների փաստացի երկրաբանական կարգը չի համապատասխանում նախագծայինին, և խնդրել է ուսումնասիրել առաջարկությունները և տալ լուծում:

Պատվիրատուն նշված առաջարկները 05.10.2016թ.-ին վերահասցեավորել է <ԱՆՈՒՇԻԿ ՋՐԵՐ> ՍՊԸ-ին՝ առաջարկելով ուսումնասիրել կապալառուի կողմից բարձրացված հարցերը, որին ի պատասխան <ԱՆՈՒՇԻԿ ՋՐԵՐ> ՍՊԸ-ն 28.10.2016թ-ի գրությունում նշել է, որ <<... բացված խրամուղու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեր կողմից տրված բնահողի մշակման կարգը համապատասխանում են ըստ ՇՆևԿ IV-2-82 N 1 հավաքածուի մեջ նկարագրված բնահողերի տեսքերին, սակայն կրային ցեմենտով ուժեղ շաղկապվածության պատճառով բնահողի մշակման ժամանակ անհրաժեշտություն է առաջացել ՆԿ3+60-ՆԿ5+70, ՆԿ7+70-ՆԿ14+20 և ՆԿ21+65-ՆԿ22+80 հատվածներում կիրառել նախնական փխրեցում: Ելնելով ցեմենտային առկա աստիճանից այդ հատվածներում փխրեցումը կկամգի ընդհանուր ծավալի 45%-ը՝ այն է 700 խմ ...>>

06.12.2016թ.-ին կատարվել է պայմանագրի փոփոխություն և փխրեցման աշխատանքների համար լրացուցիչ վճարվել է 2,352 հազար դրամ: Նշված գումարը վճարման ենթակա չէր, քանի որ եզրակացությունում, ի տարբերություն կապալառուի կարգի փոփոխման առաջարկությանը, նշվել է, որ բնահողի կարգը նախագծում ճիշտ է ընդունվել՝ 10զ/9դ V-րդ կարգ, և հետևաբար ըստ ՇՆևԿ IV-2-82 հավաքածուի N 1 –ն այդ բնահողի մշակման համար նախնական փխրեցումը չի վճարվում:

Առարկություն՝

Կապալառու կազմակերպության նամակի հիման վրա կատարված դաշտային ուսումնասիրությունների արդյունքում բնահողերի մշակման խմբերը (կարգերը) չեն փոխվել, քանի որ ինչպես ծավալային կշռի, այնպես էլ հարիկաչափական կազմի առումով, որոնց հիման վրա է որոշվում բնահողերի խումբը (կարգը), նախագծային ցուցանիշների հետ շեղումներ չեն հայտնաբերվել:

Մորենային առաջացումները, որոնք դասվում են փխրաբեկոր նստվածքային առաջացումների խմբին, կրային ցեմենտով ամուր շաղկապվածության արդյունքում վերածվել են գրեթե կոնգլոմերատների, որոնք հանդիսանում են կիսաժայռային ապարներ: Վերջիններիս մշակումը համեմատած փխրաբեկոր նստվածքների հետ անհամեմատ դժվար է և առավել աշխատատար:

Բնահողերի նախնական փխրեցման տարբերակը մեր կողմից ընտրվել է նկատի ունենալով երկու հիմնական պատճառ.

- **Խրամուղու փորումը էքսկավատորի միջոցով բնահողի առավել ցեմենտացված ուղեհատվածներում երբեմն դառնում էր գրեթե անհնար:**
- **Խրամուղու նախագծային լայնությունը շատ հաճախ թույլ չի տալիս հատկապես խոր հորիզոններից առանց նախնական փխրեցման կամ ջարդոտման խրամուղուց հանել խոշորակտոր բեկորանյութը մամանավանդ, այն դեպքերում երբ վերջիններս իրենց երկարությամբ տեղադրված են լինում խրամուղու ծրագծին ընդլայնական:**

• **ՀՀ Գեոարքունիքի մարզի Ծակքար համայնքի արոտավայրերի ջրարբիացման ցանցի կառուցման աշխատանքների իրականացման Պայմանագիր թիվ CARMAC2-CP-15-G-5/02:**

30.05.2016թ. համայնքի ղեկավարը դիմել է պատվիրատուին՝ նշելով, որ <<... աղբյուրների ջրհավաք կապտաժի սանիտարական վիճակը վայրի կենդանիների և անասունների կողմից աղտոտելուց ապահովելու համար խնդրում եմ ջրարբիացման ծրագրի շրջանակներում կատարել տարածքի ցանկապատում ...>>: 07.07.2016թ-ին նույն խնդրանքով ևս մեկ անգամ համայնքի ղեկավարը դիմել է պատվիրատուին՝ ավելացնելով, որ ցանկապատումը իրականացվի մետաղական խողովակներով:

Նախագծային ընկերությունը նշված առաջարկություններին տվել է դրական եզրակացություն և կատարել նախագծային փոփոխություններ: Ավելին, առաջարկված մետաղական խողովակներով ցանկապատի փոխարեն նախագծել է կլոր կտրվածքով մետաղական ճնշումային խողովակներով ցանկապատ (այլ օբյեկտներում փշալարով ցանկապատ նախագծելու պարագայում) և ընդամենը երկու աղբյուրակապի համար ցանկապատում 1.2 հա տարածք: Նշվածի հիման վրա պայմանագրային գինը ավելացվել և կատարողականով վճարվել է 8,920.9 հազար դրամով, այն

դեպքում, երբ, համաձայն <<Լավո>> ՍՊԸ-ի կողմից 25.09.2015թ-ին տրված թիվ 103-15 փորձաքննության եզրակացության, նախագիծը համապատասխանել է ՀՀ-ում գործող նախագծային նորմերի պահանջներին, կամ ոչնչով չի հիմնավորվում 8,921 հազար դրամի լրացուցիչ ցանկապատի կառուցման աշխատանքների անհրաժեշտությունը՝ կենդանիների կողմից խմելու համար կառուցվող աղբյուրը նույն կենդանիների կողմից աղտոտելուց պաշտպանելու համար:

Առարկություն՝

Ցանկապատված 1,2 հա տարածքում գտնվում են Ծակքար, Ձորաքյուղ, Վարդաձոր և Երանոս համայնքների խմելու և ջրարբիացման ջուր ապահովող թվով 10-12 ջրաղբյուրներ:

• ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի արտավայրերում ջրարբիացման ցանցի կառուցման աշխատանքների իրականացման Պայմանագիր թիվ CARMAC2-CP-16-L-4/02

Կապալառու <<ՕՍՏ-ՇԻՆ>> ՍՊԸ-ն և համայնքի ղեկավարը 03.10.2016թ թիվ 20 և 10.10.2016թ թիվ 82 գրություններով պատվիրատուին տեղեկացրել են, որ <<... ջրատաշտակ 5-ում իրականում չկա ջրի անհրաժեշտ քանակություն, այդ իսկ պատճառով վերոնշյալ ջրատարի կառուցման անհրաժեշտություն չկա ...>>:

Նախագծային ընկերությունը տվել է իր համաձայնությունը 5-րդ ջրատաշտակը չկառուցելու վերաբերյալ: Կատարված պայմանագրի փոփոխությամբ նվազեցվել են այդ ջրատաշտակի կառուցման աշխատանքների ծավալները, սակայն չեն նվազեցվել փարախից դեպի 5-րդ խմոց գնացող 139 խմ ավազակոպճային ծածկույթով ճանապարհի կառուցման աշխատանքները, իսկ այդ հատվածի ճանապարհի համար նախատեսված 93 խմ 3-րդ կարգի բնահողի բուլդոզերով 20 մ տեղափոխման աշխատանքները նվազեցվելու փոխարեն ավելացվել են 230 խմ-ով, ինչի արդյունքում կատարողականով ավել է հաշվարկվել և վճարվել 1,092 հազար դրամով ((230խմ*616,2դր+93խմ*616,2դր+139խմ*5100դր)*ԱԱՀ):

Բացի նշված փոփոխությունները համայնքի ղեկավարը և կապալառուն առաջարկել էին նաև <<... Ջրատաշտակ 2-ի աշխատանքները իրականացնելու ժամանակ հայտնաբերվել է նոր ջրային շերտեր, որը նախագծում չկա և այն չկորցնելու համար առաջարկվում է ավելացնել Փ225 մմ տրամագծի պոլիէթիլենային դրենաժային խողովակ՝ 20 մ երկարությամբ: Ջրատաշտակ 3-ի և Ջրատաշտակ 4-ի հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են գրունտային ջրեր:

Հետագայում շահագործմանը չխանգարելու համար, առաջարկվում է վերոնշյալ յուրաքանչյուր ջրատաշտակի համար լրացուցիչ ավելացնել Փ225մմ տրամագծի պոլիէթիլենային դրենաժային խողովակ՝ 20 մ երկարությամբ ...>>

Այս առաջարկությունները ևս պատվիրատուն ուղարկել է <ՔՎԷ նախագիծ> ՍՊԸ-ին՝ առաջարկելով ուսումնասիրել և տալ մասնագիտական եզրակացություն բարձրացված հարցի վերաբերյալ:

Նախագծային կազմակերպության կողմից իրականացվել են փոփոխություններ, որոնց ուսումնասիրությամբ պարզվել է, որ առանց որևէ հիմնավորման.

- թիվ 1 ջրատաշտակում սխեմատիկ ավելացվել է 13գծ.մ Փ225մմ պոլիէթիլենային դրենաժային խողովակ՝ չտալով հստակ կոորդինատները և կտրվածքների չափերը,

- թիվ 1 ջրատաշտակում փոփոխվել է աղբյուրակապի տեղը ավելացնելով Փ50 մմ պոլիէթիլենային խողովակի երկարությունը 25 գծմ-ով՝ չնշելով նոր աղբյուրակապի հստակ տեղը՝ կոորդինատները, երկայնական և լայնական կտրվածքները,

- թիվ 1 ջրատաշտակում նախագծով նախատեսված 10գծ.մ Փ75 պոլիէթիլենային ջրահեռացման խողովակը փոխարինվել է 15 գծ.մ Փ76*3մմ հաստությամբ երկաթյա խողովակով,

- թիվ 2 ջրատաշտակում առաջարկված 20 գծ.մ Փ225 մմ տրամագծով պոլիէթիլենային դրենաժային խողովակի փոխարեն, սխեմատիկ, ցույց է տրվել նախագծված ջրհավաք խողովակին միացող լրացուցիչ է 47 գծ.մ դրենաժային խողովակ՝ չնշելով ջրհավաք խողովակին միացման կետի կոորդինատները և խողովակաշարի երկայնական և լայնական կտրվածքները,

- թիվ 4 ջրատաշտակում առաջարկված 20 գծմ դենաժի փոխարեն, սխեմատիկ, առանց կտրվածքների չափերի և հատակագծային դիրքի, ավելացվել է 40 գծ.մ դրենաժային խողովակ:

Առանց որևէ հիմնավորման և անհրաժեշտության կատարված վերը նշված փոփոխությունների արդյունքում պայմանագրային գինը ավելացվել և կատարողական ակտերով վճարվել է 3,434 հազար դրամ:

Առարկություն՝

«Ը Լոռու մարզի Մեծավան համայնքի արտոլալայրերում ջրարբիացման ցանցի կառուցման աշխատանքների փոփոխությունները իրականացվել են ոչ թե անհիմն, այլ համայնքի ղեկավարի, տեղում փաստացի համապատասխան մասնագետների (պարվիրատուի, տեխնիկական հսկիչի, նախագծի գլխավոր մասնագետի) բազմաթիվ և խորը ուսումնասիրությունների արդյունքում:

Թիվ հինգ խմոցը գտնվում է մնացած խմոցներից ամենահեռավորը համայնքից և այդ պարճառով էր, որ ջրատաշտակի մոտ էր տեղադրված նախագծվող փարախը ու կացարանը և այդ բոլորը համալիրը համարվում էր հինգերորդ տեղամաս: Հինգերորդ տեղամասի ճանապարհի ծավալները վերաբերվում են համալիրին տանող կառույցներին: Միաժամանակ խմոցի ճանապարհը իրականացնելիս դեռ պարզ չէր կա անհրաժեշտ քանակի ջուր թե ոչ, ուտրի, որ հասնենք խմոց պետք էր իրականացնել որոշակի շարքիչ ծավալի աշխատանք, որը կատարողական ակտով չի էլ նշվել:

Միաժամանակ ճանապարհի հետ գուգահեռ իրականացվեցին խմոցի տարածքի կտրում, հարթեցում, նշահարում, խմոցի հենարանների փորում և այլ աշխատանքներ: Իրականացվեց նաև նախագծով նախատեսված ստորգետնյա ջրահավաքի հողային աշխատանքները այստեղ պարզվեց, որ ջրի քանակը շարքիչ է, որոշվեց երկարացնել ստորգետնյա ջրահավաքի երկարությունը, որը նույնպես ցանկալի արդյունք չտվեց: Քանի որ թիվ հինգ խմոցը գտնվում էր փարախի և հովիվների կացարանի մոտակայքում և ջրատաշտակը շարք կարևոր էր համայնքին, գյուղապետը առաջարկեց ստորգետնյա ջրահավաքը ևս մի երկու հատվածում որոնցում նույն պես շարքիչ ջուր հավաքվեց : Բոլոր հատվածները անհրաժեշտ էր իրականացնել հետլիցք, հարթեցում և մի շարք բնապահպանական աշխատանքներ:

Թիվ 1 ջրատաշտակի նոր նախագծում, որը կնքված է և ստորագրված նախագծային կազմակերպության կողմից գոյություն ունի դրենաժային խողովակի խրամուղու լայնական կտրվացճքը, որտեղ նշված է բոլոր անհրաժեշտ չափերը բարձրություն խրամուղու ներքևի հատակի լայնություն, իսկ հատակագծում երկարությունը: Նշված է նաև ջրահեռացման խողովակի երկարությունը, իսկ խողովակը փոխարինվել է մետաղականով այն պարճառով, որ այն անցնում է գոյություն ունեցող ճանապարհի տակով: Հիմնական նախագծում հատակ նշած է հենապարի և

ջրափաշտակի կոորդինատորները և իրականացնելով հեփհաշվարկ կարելի է պարզել աղբյուրակապի տեղը և կոորդինատները: Ավելացված խողովակի լայնական կտրվացքը նույնն են ինչ որ հիմնական նախագծում այդ պարճառով լրացուցիչ նախագծում չեն կրկնվել:

Վերոհիշյալ փոփոխությունների հիման վրա Մեծավան համայնքի ջրարբիացման համակարգի կառուցման աշխատանքները պակասել են 5 մլն դրամով:

• CARMAC2-CP-15-G-6/02 (Artsvanist CW) ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի արտավայրերում ջրարբիացման ցանցի կառուցում:

24.05.2016թ.-ին համայնքի ղեկավարը դիմել է պատվիրատուին՝ նշելով, որ «... 2-րդ խմոցը նպատակահարմար է տեղափոխել գարաժներ կոչվող տարածքում, որպեսզի համայնքի անասնահոտի համար նպատակին ծառայելու: ... ուստի խնդրում ենք Ձեզ կատարել խմոցի տեղափոխություն 420մ ջրագծի տեղափոխմամբ ...»: Սրան ի պատասխան նախագծող «Անուշիկ Ջրեր» ՍՊԸ-ն կատարել է խմոցի տեղափոխում առաջարկված 420 մ-ի փոխարեն 687 մ՝ դուրս գալով իրականացվող ծրագրի շրջանակներից, և խմոցը արտավայրերից հանել և նախագծել է համայնքի վարչական սահմաններում, որի համար լրացուցիչ **վճարվել է 6,083 հազար դրամ:**

Առարկություն՝

Արծվանիստ գյուղի N2 խմոցի տեղափոխման տեղը ընտրել է գյուղապետարանը (ընդհանրապես խմոցների տեղերը ընտրում են գյուղապետարանները և ոչ թե նախագծողը):

Խմոցի այդ տեղը և խմոցին ջուր մոտեցնող ջրափարի ընթացագիծը նախագծողին ցույց են տվել գյուղապետը և «ԳԾԻԳ» ՊՀ ներկայացուցիչը: Նախագծման ընթացքում դաշտային հեփազոտական աշխատանքների չափագրման տվյալները ցույց են տվել, որ ջրափարի իրական երկարությունը մինչև նախագծվող խմոցը կազմում է ոչ թե 420մ այլ 687մ:

Տեղում տեղափոխությունը ցույց կտա, որ նույնիսկ շատ մեծ ցանկության դեպքում չկա հնարավորություն ջրափարի ընթացագիծը և խմոցի տեղը փոխելու համար:

- CARMAC2-CP-16-A-6/02 (Aparan CW) ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի արտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցում:

Կապալառու <<Մեդիսոն Էյբլ>> ՍՊԸ-ի տնօրենը 23.07.2018թ.-ի թիվ Մ-39 գրությամբ դիմել է պատվիրատուին՝ նշելով, որ <<... հաշվի առնելով ճանապարհների մեծ թերությունը և դժվար անցանելիությունը խնդրում ենք խողովակի տակ հատկացված ավազե նախապատրաստական շերտը փոխարինել տեղի փափուկ, մաղած բնահողով ...>>: Պատվիրատուն նշված փոփոխության համար խնդրել է նախագծային ընկերության եզրակացությունը: Նախագծային ընկերությունը 27.07.2018թ.-ի թիվ 351 գրությամբ տվել է իր համաձայնությունը և պայմանագրում կատարել են փոփոխություն: Ճանապարհների դժվարանցանելիությունը հիմք ընդունելով և կատարելով պայմանագրի փոփոխություն՝ հարցականի տակ է դրվել նույն պայմանագրով պատվիրված և կատարողականներով վճարված 30,553 հազար դրամ աշխատանքների, կապալառուի կողից պայմանագրի ծավալներին և ՇՆՈւԿ-նորմերին համապատասխան կատարելու փաստը, քանի որ ընդհանուր 89,468 հազար դրամ պայմանագրային գնի 34%-ը՝ 30,553 հազար դրամը, վճարվել է նախագծով նախատեսված և կատարողական ակտերով ընդունված ջրագծի երկայնքով 7,3 մ լայնությամբ (որից խրաուճու կողքի հատվածը 5մ լայնությամբ) ճանապարհի՝ հարթակի կառուցման աշխատանքների համար:

Առարկություն՝

Խոսքը վերաբերում է բնակավայրից մինչև հեռագնա արտավայրեր, որտեղ իրականացվում է ջրարբիացման համակարգի կառուցումը, տանող ճանապարհների դժվար անցանելի հատվածներին: Հարկապես այն հատվածներին, որոնք ունեն մեծ երկայնական թերություններ, կտրուկ վերելքներ:

Սույն նախագծում իրականացրած ճանապարհ-հարթակը, որն անցնում է բացառապես խողովակաշարի ծրագծով, նախատեսված չէ միայն ջրատարի տակ ավազի նախապատրաստական շերտ տեղափոխելու համար, այլ նախատեսված է ամբողջ շինարարության ընթացքում շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև հեղազա շահագործման ընթացքում ջրագծի սպասարկման/նորոգման համար: Այնպես որ ոչ մի բան այդ փոփոխությամբ հարցականի տակ չի դրվում:

- CARMAC2-CP-16-SH-3/02 (P.Mantash CW) ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշ համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցում և CARMAC2-CP-16-SH-1/02 (Artik CW) ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի կառուցում:

28.06.2016թ.-ի թիվ 02 գրությամբ <<ՍՈՆՈՄԱԴ>> ՍՊԸ-ի տնօրենը դիմել է պատվիրատուին՝ նշելով, որ <<... հունիսի 25-ի բնական աղետի պատճառով տեղացած հորդառատ անձրևներն ու տեղատարափ կարկուտը մեծ հեղեղումներ ու ավերվածությունների պատճառ են դարձել: Բնական աղետը մեծ վնասներ է հասցրել նաև մեր շինհրապարակին, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել շինհրապարակում կատարված աշխատանքներն իրականացնել կրկնակի: 2,850 մ փորված խրամուղում կատարվել էին բոլոր տիպի նախապատրաստական աշխատանքները, մոնտաժվել էին պլաստմասե խողովակները և կատարվել էին բավականաչափ լիցքային աշխատանքները, բայց հեղեղումներից հետո բոլոր նախապատրաստական աշխատանքները և լիցքերը հեղեղել, մաքրել, տարել է, խրամուղին շատ տեղերում 0.5-2 մ խորացել է, մոտ 200 մ-ը լցվել է հիմնովին, իսկ 800 մ-ը՝ մասնակի ... Պէ խողովակաշարը 2,900 մ մոնտաժված և բավականաչափ հողով ծածկված էին, բոլոր հողային աշխատանքները հեղեղել, մաքրել, տարել է, իսկ խողովակները տեղ-տեղ վնասված դուրս է շարտել մի քանի մետր ...: Խնդրվում է, ելնելով ստեղծված իրավիճակից, ստեղծել հանձնառով՝ վերը նշված իրավիճակը ուսումնասիրելու փաստերն արձանագրելու համար հետագա իրականացվելիք աշխատանքներն իրականացնելու համար լուծումներ տալու>>

<<Ղարաբաղյան-շին>> ՍՊԸ-ի տնօրենը 29.06.2016թ.-ի թիվ 2/06 գրությամբ դիմել է պատվիրատուին՝ նշելով, որ <<... հունիսի 25-ին բնական աղետի պատճառով տեղացած հորդառատ անձրևներն ու տեղատարափ կարկուտը մեծ հեղեղումներ ու ավերվածություններ է պատճառել օբյեկտին, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել օբյեկտում կատարված որոշ աշխատանքներ իրականացնել կրկնակի: 7,500 գծմ իրականացվել էր խրամուղի, որից 2,500-ում կատարվել էին նախապատրաստական բոլոր աշխատանքները: Հեղեղումներից հետո բոլոր կատարված նախապատրաստական աշխատանքները հեղեղը լվացել է, խորացնելով խրամուղին գրկելով փափուկ հողից: 2,500մ հատվածում խրամուղու հատակը վեր է ածվել լերկ գլաքարերի, իսկ 500մ հատվածում հեղեղաջրերը խրամուղին լցրել են 60-90%-ի չափով: Ամբողջ խրամուղին պետք է նորից մշակվի և լրացուցիչ լիցք արվի: Ելնելով ստեղծված իրավիճակից խիդրում եմ ստեղծել հանձնաժողով վերը նշված իրավիճակը տեղում ուսումնասիրելու, փաստագրելու, հետագա իրականացվելիք աշխատանքներին լուծումներ տալու համար ...>>

<<Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի (այսուհետ <<ԳԾԻԳ>> ՊԸ) տնօրենը, 04.07.2016թ.-ին և 06.07.2016թ.-ին համապատասխան

գրություններով ՀՀ ԱԻՆ-ից և Ջրային տնտեսության պետական կոմիտեից, խնդրել է տրամադրել մասնագետներ՝ վնասները գնահատելու նպատակով ստեղծվելիք հանձնաժողովում ներգրավելու համար:

13.07.2016թ-ին <<ԳԾԻԳ>> ՊՀ-ի տնօրենի թիվ 122 հրամանով ստեղծվել է հանձնաժողով՝ պատճառած վնասները տեղում ուսումնասիրելու, առկա վնասների չափերը ճշտելու և հետագա անհրաժեշտ աշխատանքների իրականացման ուղղությամբ լուծույթներ առաջարկելու նպատակով՝ հետևյալ կազմով <<ԳԾԻԳ>> ՊՀ-ի ճարտարագետ-շինարարը, Շիրակի մարզի քաղաքաշինության վարչության պետը, ՀՀ ԱԻՆ փրկարարական ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության բնակչության բաժնի ավագ հրահանգիչը, <<Մելիորացիա>> ԲԸ-ի տնօրենի տեղակալը, <<ԳԾԻԳ>> ՊՀ-ի ՄԱԹ համակարգողը, Արթիկի քաղաքապետը, <<Արթիկ համայնքի արոտագտագործողների միավորում>> ՍԿ նախագահը, Փոքր մանթաշ համայնքի ղեկավարը, <<Սիիավան>> ՍՊԸ տնօրենը, <<Անուշիկ ջրեր>> ՍՊԸ-ի տնօրենը, <<Սոնոմեդ>> ՍՊԸ-ի տնօրենը և <<Ղարաբաղյան-շին>> ՍՊԸ-ի տնօրենը:

Նույն հրամանով հանձնարարվել է հաշվարկել պատճառած վնասի չափը և կազմել համապատասխան ակտ:

Ստուգմանը որևէ ակտ և պատճառած վնասի չափի հաշվարկ չի ներկայացվել:

Չնայած նրան, որ պատվիրատուն 04.07.2016թ-ին և 06.07.2016թ.-ին ՀՀ ԱԻՆ-ից և Ջրային տնտեսության պետական կոմիտեից խնդրել է տրամադրել մասնագետներ և հանձնաժողովը ստեղծվել է 13.07.2016թ. հրամանով, հանձնաժողովի նիստի արձանագրությունում նշվել է, որ

<<... հանձնաժողովը 01.07.2016թ.-ին, տեղում ուսումնասիրելով հեղեղների պատճառով Արթիկ համայնքի արոտավայրերի ջրարբիացման համակարգի ջրագծի բացված խրամուղու վերականգնման համար առաջացած լրացուցիչ աշխատանքների անհրաժեշտությունը, հանգեց այն երակացության, որ շին կազմակերպության կողմից բարձրացված հարցերը համապատասխանում են իրականությանը: Հանձնաժողովը որոշեց առաջարկել աշխատանքների չափման համար հիմք ընդունել ջրագծի հատակագծի վրա նշված աշխատանքների մեծությունները: Վթարված խրամուղիների վերականգնման համար պետք է կատարել հետևյալ լրացուցիչ աշխատանքները. ք. Արթիկ ավազից նախապատրաստական շերտ 199 խմ, խրամուղու մաքրում 3-րդ կարգի բերվածքներից 323.5 խմ, հետադարձ լիցք փափուկ բնահողից 595 խմ, հետադարձ լիցք 2,815 խմ: Գ. Փոքր Մանթաշ՝ խրամուղու մաքրում բերվածքներից 3-րդ կարգ 1,786 խմ և հետադարձ լիցք 252խմ...>>>

Նշված արձանագրության հիման վրա կապալառուների հետ կազմվել են պայմանագրերի փոփոխություններ Փ. Մանթաշի համար 3,030 հազար դրամի չափով, իսկ Արթիկի համար 4,731 հազար դրամի չափով: Այդ գումարների չափով կամվել են նաև կատարողական ակտեր:

Չնայած նրան, որ հանձնաժողովի արձանագրությունում Փ. Մանթաշի համար որպես լրացուցիչ կատարվելիք աշխատանքներ նշվել են խրամուղու մաքրում 3-րդ կարգի բերվածքներից 1,786 խմ և հետադարձ լիցք 252 խմ, պայմանագրի փոփոխությունում ներառվել և կատարողականերով վճարվել են նաև ոչնչով չհիմնավորվող լրացուցիչ 1,534 խմ ավելորդ բնահողի հարթեցման աշխատանքներ՝ գումարով 772 հազար դրամ: Արթիկ համայնքի լրացուցիչ ծավալներում հաշվարկվել են արձանագրությունում չնշված 2,200մ պոլիէթիլենային խողովակաշարի վերատեղադրման աշխատանքներ՝ 693 հազար դրամի:

Արձանագրություններում նշված վնասված աշխատանքների կատարումը մինչև 25.06.2016թ-ը և դրանից հետո կատարված լրացուցիչ աշխատանքները չեն հիմնավորվում ծածկված աշխատանքների ընդունման ակտերով: Լրացուցիչ կատարված աշխատանքների համար որևէ ծածկված աշխատանքների ընդունման ակտ չի կազմվել, իսկ մնացածի համար կազմված ակտերը կրել են ձևական բնույթ և կազմվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ-ի թիվ 44 հրամանով հաստատված պահանջների խախտմամբ՝ ակտերի վրա բացակայում են ամսաթվերը և նրանք հաստատված չեն պատվիրատուի կողմից, իսկ Արթիկ համայնքի ծածկված աշխատանքների ընդունման ակտերը կազմվել են նաև աշխատանքների տեխնոլոգիական հերթականության խախտմամբ, առանձին ակտավորման ենթակա աշխատանքների ընդունման համար կազմվել է մեկ ընդհանրական ծածկված աշխատանքի ընդունման ակտ: Մասնավորապես խրամուղու փորման աշխատանքների ծածկված աշխատանքների ընդունման ակտը կազմելուց հետո միայն պետք է թույլատրվեր իրականացնել ավազից նախապատրաստական շերտի աշխատանքների իրականացումը և դրանից հետո այդ աշխատանքի համար կազմվեր առանին ծածկված աշխատանքների ընդունման ակտ, այնինչ միանգամից կազմվել է խրամուղու փորման և ավազի նախապատրաստական աշխատանքների ծածկված աշխատանքների ընդունման ակտեր: Բացի այդ, բոլոր ակտերում արձանագրված է, որ լուսանկարները կցվում են, սակայն հաշվեքնությանը որևէ լուսանկար չի ներկայացվել: Ընդհանրապես լրացուցիչ աշխատանքների ի հայտ գալը և այդ աշխատանքներն իրականացնելը հիմնավորող որևէ լուսանկար հաշվեքնության չներկայացվեց: Չի ներկայացվել արձանագրությունում նշված ծավալները հիմնավորող էսքիզներ կամ գծագրեր:

Քանի որ աշխատանքների իրականացման ընթացքում անձրևներից առաջացած մակերևույթային ջրերից կորուստները կապալառուին փոխհատուցելը պայմանագրերով և որևէ այլ իրավական ակտով նախատեսված չէ, իսկ վարկատու կամակերպության ընթացակարգերով նախատեսված պայմանագրերի ընդհանուր պայմաններով աշխատանքների մեկնարկի օրվանից մինչև թերությունների վերացման վկայագրի տրման պահը անձնական վնասվածքի, մահվան, ինչպես նաև գույքի կորստի կամ վնասի ռիսկերը (ներառյալ աշխատանքները, նյութերը, կայանքներն ու սարքավորումներն առանց սահմանափակման), որոնք չեն հանդիսանում պատվիրատուի կամ նախագծի սխալի հետևանք, կամ ուղղակիորեն աշխատանքների իրականացման երկրի վրա ազդող պատերազմի ու ռադիոակտիվ աղտոտման հետևանք, հանդիսանում են կապալառուի ռիսկերը: Պայմանագրերի և նախագծերի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական մասնագրգրի 3.4.2 կետերի ինժեների հավանությամբ կամ ցուցմունքով կապալառուն պետք է կառուցվածքների անհրաժեշտ պաշտպանական միջոցներ ձեռնարկի մակերեսային ջրերից պաշտպանվելու համար՝ կառուցելով ժամանակավոր պատվարներ, պատեր, ճիմեր, իսկ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 703-րդ հոդվածի 1-ին կետի 2) ենթակետի՝ կատարված աշխատանքի արդյունքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը՝ մինչև պատվիրատուի կողմից այն ընդունելը, կրում է կապալառուն, հետևաբար հորդառատ անձրևից առաջացած կորուստները, որոնց վերացման համար վճարվել է 7,762 հազար դրամ հանդիսանում են կապալառուների վնասները և վճարման ենթակա չէին:

Առարկություն՝

Համաձայն կառավարության 2016թ հունիսի 30-ի համար 663-Ն որոշման հունիսի 25-ին տեղացած աննախադեպ սելաֆը, կարկուտը, անձրևը, որը ավիրել էր Արթիկ քաղաքը, (կառավարության հրամանը կար գործի մեջ) տեղի է ունեցել սարերում որտեղից սկիզբ են առնում մեր ջրագծերը: Այդ սելաֆը կառավարության կողմից ընդունվել է որպես բնական աղետ: Արձանագրության մեջ նշված է, որ հանձնաժողովը որոշեց առաջարկել աշխատանքների չափման համար հիմք ընդունել ջրագծի հատակագծի վրա նշված աշխատանքների մեծությունները և արձանագրությունում բերված ծավալները վերցված են նախագծից, ծավալները տեղադրվել են համադրման մեջ ու ստացվել է վնասի չափը, որտեղից էլ ստացվել է ստուգողների նշած գումարը, միաժամանակ կան համապատասխան բազմաթիվ թե լուսանկարներ թե տեսանյութեր: Հանձնաժողովը չպետք է նշեր խրամուղու մեջ բերված հողերը քարերը և այլ ջրաբերուկները ինչ անել՝ բարձել-տեղափոխել մի քանի կիլոմետր թե

